

ՇԱՔԵ ՎԱՐՍՅԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՇԱՔԵ ՎԱՐՍՅԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

(ՆՈՎԵԼՆԵՐ)

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

ШАКЭ ВАРСЯН

Цветы возрождения
(Новеллы)

(На армянском языке)
Ереван, Армгиз, 1949 г.

ՎԵՐՋԻՆ ԱԻՐԵՐԳԻ

Երեկոն կմոտենար։

Մերունի Սեղրակ բահի քանի մը հարված ալ խփեց հողին ու կանգ առավ։ Հոգներ էր։ Նստավ քարի մը վրա և սկսավ մատներու վարժ շարժումներով ծխագլանիկ մը փաթթել։

Արաբկիրի բարձունքին նստած, իր մշուշապատ աչքերով դիտեց դեպի քաղաք դացող ճանապարհը՝ եղերված նորատունկ ծառերով։ Բազմաթիվ բանվորներ կաշխատեին Արաբկիրը Երևանին կապող տրամվայի գիծը կառուցելու։

Ծուխի թանձր քուլա մը ներս քաշեց, և տխրորեն նայեցավ կնճռոտած, կմախքացած ձեռքերուն, որոնք արդեն վաղուց կորանցուցեր էին իրենց երիտասարդական ուժը, դարձեր էին դողդոջուն և թանձրացած երակներու կապույտը ցցվեր էր փոթիփոթած մորթին տրանքներեն...

Ձեռքե՞ր...

Մի՞թե անոնք այդ նույն ձեռքերն էին, որոնք առեռոք, զորությամբ տրոփուն, կփորեին հողը, կփշրեին ժայռեր, կաղցնեին տախտակներ, կառուցելու համար փեռայության տունը...

Մերունին կրկին նայեցավ ձեռքերուն, որոնք բահի քանի մը հարվածներեն հոգներ էին, շրթները թեթև

բաժնվեցան իրարմե, դողդողացին, բայց արտաբերված բառերը մնացին անլսելի, թաքնվեցան սպիտակ բեխերուն խտության մեջ։

Շրթունքները նորեն շարժեցան, տխրագին ծամածռություն մը գծագրվեցավ բերանին ձախ անկյունը, նայվածքը մռայլվեցավ և մտքին մեջ ան կրկնեց նույն անլսելի բառերը։

— Էհ՞ֆ, ջահելության ապարդյուն օրեր...

Ուղղաձիգ բարձրացող սիկարեթի բարակ ծուխին ընդմեջեն, աչքերը հառեց հեռավոր տարածության մը։ Իր անցյալին...

Հիշողությունը փոթորկեցավ, տարուբերվեց և նորեն կանգ առավ իր առաջին տան սեմին, զոր կանգներ էր քսանյոթ տարեկան հասակին, Խարբերդի մեջ։

Հինգ վեց տարի ապրեր էր Հանդիսա, կնոջը և երեխաներին հետ։ Հետո սկսվեր էր համաշխարհային պատերազմը, խառնվեր էր ամեն բան, մթագներ՝ Խարբերդի ծիծղուն կյանքը։ Դաշտերուն մեջ գաղրեր էր աշխատանքը։ Ալեոտի, հայկական ջարդի ուրվականը կշրջեր, կոռնար ամեն կողմ քաղցած գայլերու սարսռա-ալդեցիկ ոռնոցով... Օսմանյան սուրը կտմիրեր Հայաստանը։

Ամբողջ ժողովուրդը կվտախշեր շարան-շարան, տնորոշ ուղղություններով, խուճապահար։ Կվտախշեր թողած տունն ու այգին, ամբողջ կյանք մը իր հետին...

Ընդհանուր տեղահանություն...

Ծերունի Սեդրակ խորունկ հառաչ մը հանեց։ Հնքերուն միացման կետին վրա կազմված երկու զուգահեռ կնճիռներն ավելի խորացան և մատերու ջղային շարժումներով հանդարտեց, ճզմեց ձեռքի սիկարեթը։

Հիշեց այն վերջին պահը, երբ երկաթյա ծանր ու խոշոր բանալին ծակին մեջ դարձուցեր էր երկու անդամ և կողպեր տան դուռը ամուր, ինքն իր հերթին միանալու համար տարագիրներու խմբին։ Հետադարձ նայվածքներով ինչպե՞ս կնայեր տանը, դռան առջև օրորվող բարձր բարդիին։ Սիրտը կկծկվեր, կուզեր ետ դառնալ, դռան առջև կանգնիլ և ներս չթողնել ոչ ոքի։ Մեռնիլ այդպես՝ բարդիի սավերին տակ...

Իր վիճակագրության տունը փլատակ էր դարձեր անշուշտ հիմա, գերանները կախվեր էին, տատասկը խեղդեր էր տնամերձ այգին, և գուցե քամին էր միայն, որ տխուր սուլոցով կանցներ իր տան վրայեն և կօրորեր դեռ կանգուն մնացած բարդիի բարձր գագաթը...

— Ապարդյուն, ցավատանջ երիտասարդություն,— շշնջաց կրկին։

Ավտո մը անցավ, իր հետ թողնելով փոշիի խոշոր ամպ մը։

Ծերունի Սեղրակ սթափվեցավ, լոսկ մը դիտեց ասֆալտի գծին վրա աշխատող բանվորները, ուզեց վեր կենալ, քիչ մը ևս փորել տանը հիմքը մինչև երեկո, բայց տեղեն չշարժեցավ։ Բոլոր ոսկորները կցավեին հոգնութենեն։

Հիմա, երբ հայրենի հողի վրա իր վերջին տունը կկառուցեր, ուժերը սպառվեր էին, և այս գիտակցությունը մահվան չափ տխուր էր իրեն համար։ Բաղմաթիվ տներ կառուցել ասդին, անդին, տարբեր քաղաքներու մեջ, օտար մարդոց համար և չունենալ այժմ ուժը կերտելու իր հարազատ տունը, այն որ իրենը, ներունդներունը, հողինը պիտի ըլլար, անիսախտ անկործան...

Զոհրաբ, իրեն մնացած միակ որդին, կփորեր հողը աշխույժով։ Հողի հսկայական կույտ մը դիզվեր էր հիմքի կողքին։ Տղան երկու օրվան աշխատանքին արդյունքը։

Մայրամուտին դեմ կանգնած, երկու ոտքերը իրարմե կես մեթր հեռու, ան կփորեր, կփորեր անդուլ։ Քրտինքի կաթիլները հեռևողականորեն ճակատեն, այտերեն կկաթկթեին գետին։ Ան մոռցեր էր շրջապատը, ժամանակը։ Աշխատանքի երգը շրթներուն, իր նոր տան հիմքերը կպատրաստեր։

Ծերունի Սեդրակ հիացմունքով, սեսակ մը նախանձով կդիտեր տղուն ջլապինդ մարմինը։ Որքան էր փոխվեր ան այս քանի մը ամիսներու ընթացքին։ Դեմքի արտահայտությունը դարձեր էր ավելի առնական, և հպարտ վեհություն մը կշողարձակվեր անոր փոքրիկ, թանձր հոնքերու կամարին տակ փայլփլող սև աչքերեն։

— Անպյալի Զոհրաբը չէ,— շշնջաց և գոհունակ ժպիտ մը թրթռաց ձախ այտի փոսիկին մեջ։

Անոր մանկությունը գանդաղ սահեցավ իր առջևեն։

Զոհրաբ ծնվեր ու մեծացեր էր Հալեպի երկու փոքրիկ սենյակներե բաղկացած իրենց տան մեջ։ Սկիզբները ուշիմ, աշխատասեր երեխա էր։ Կկծկվեր մորը ծունկերուն մոտ և թոթովելով իր առաջին այբբենարանը կկարդար։ Սակայն քանի մեծացեր էր, դարձեր էր անփույթ, կամազուրկ։

Դպրոցեն վերադարձին, կնետեր գրքերը անկողնին վրա, չէր լսեր մորը թախանձանքները, կվազեր բակ՝ ընկերներուն մոտ։ Կխաղար, կկռվեր, կհայհոյեր ու տուն կվերադառնար գզգզված մազերով։ Ուժասպառ կքնանար...

Հոլը համար, որ կորսնցուցեր էր մյուս բոլոր զավակները տարադրության ճամփաներուն վրա, տղուն այս վիճակը անտանելի էր, մտահոգիչ։

— Դատարկապորտ կդառնա, կարատավորև մեր ընտանիքին անունը,— կիսորհրդածեր տխրորեն...

Ամեն անգամ, որ ջանար խրատել տղուն, սպառնալիքներու, ծեծի տարափ մը թափեր անոր գլխուն, ան կթոթվեր ուսերը համառորեն անտարբեր և ատամներու արանքեն կբրթմնջեր.

— Միամիտ մարդ, չես հասկանար, ինչո՞ւ սովորիմ, ուզեցս մաշեմ։ Միևնույնն է, ես կմնամ միշտ այս աղքատ վիճակով։ Պաշտոնները, բարձր դիրքերը Ժառանգաբար անոնցն է, հարուստի զավակներունը։

Վերջացուց միջնակարգը։

Այդ դիշեր Զոհրաբ տուն եկավ շափազանց տխուր։ Հոլը ներկայությամբ, առաջին անգամ ըլլալով, քանի մը սիգարետ քաշեց իրար ետևե, հետո ինկավ անկողնին վրա ու լացավ երկար։

Ընկերներեն ոմանք, դրամ ունեցողները, գալ տարի համալսարան պիտի երթային, ուրիշներ արդեն ծանոթներու շնորհիվ գործ էին գտեր։ Իսկ ինք ի՞նչ պիտի ըներ, ի՞նչ կրնար ընել...

Ծծկեր մանկան մը պես անօգնական զգաց ինք զինք։ Պետք ուներ պաշտպանության, թիկունքի։ Այնքա՞ն մենակ էր։ Առաստաղը սկսավ պտտվիլ գլխուն վերև։ Հիմա կփլչեր, հիմա, ի՞նչ լավ կըլլար, կմեռներ, կազատվեր կյանքի անարդարութենեն...

Հայրը զգաց տղուն տագնապը։ Կոշտացած ափը դրավ տղուն գանգուրներուն մեջ, փաղաքշեց, և լուռ հեռացավ արցունքի կաթիլ մը աչքերուն մեջ...

Տխուր օրեր էին, միօրինակ, տաղտկալի, անհուսանկար։

Անցան շաբաթներ, Զոհրաբ դրեթե տունը չէր մնար։ Ո՞ւր կերթար, ի՞նչ կըներ, կաշխատե՞ր։ Հայրը ոչինչ չհասկցավ։ Գիշեր մըն ալ տուն վերադաձավ բաղուկին վրա նեռած փողկապներ, Թաշկինակներ, դոտիներ։

Հայրը հարցական նայեցավ։

— Գործ դուա,— ջղայնի պոռաց Զոհրաբ, ափովը ետ հրելով ճակտին վրա Թափթփված դանդուրները։— Վաճառական մը այս բոլորը ինծի տվավ, որ ծախեմ։ Շահին քսան տոկոսը իմս է։ Սոված մնալ չըլլար...

Խուծավ շրթունքները, քանի մը անգամ ձեռքի ջղաձիգ շարժումներ ըրավ, և մորը դառնալով, որ կուլար իր մշտական դառնագին լացովը, պոռաց.

— Ինչո՞ւ կուլաս, ուրախ չե՞ս, գործ դուա, գործ։ Վաղը շուկային մեջ կծախեմ, կծախեմ, կծախեմ... Ա՜յ...

Նույն բառը կրկնեց բաղմաթիվ անգամներ, հետո լռեց։ Լորձունքը դժվարով կուլ կուտար։ Տժգույն էր այնքա՜ն։ Կզակը երկարեր, սրածայր էր դարձեր, և աչքերուն տակը եզերող կապույտը ավելի ցցուն էր դարձուցեր անոր փոքր, սև աչքերուն Թարթիծը։

— Կծախեմ,— շարունակեց քիչ հետ։— Կըպոռամ,— դուլպա՜, փողկա՜պ, Թաշկինա՜կ։

Ծերունի Սեղրակ ցնցվեցավ։ Կարծես այդ բոլորը նոր կկատարվեր աչքին առջև, ինք կդիտեր տղուն տանջալից վիճակը, կլսեր անոր կատաղի, հիստերիկ, հիմար ծիծաղը, կտառապեր, կուզեր օգնել անոր, դոնե բառ մը ըսել։ Կոկորդը կխեղդվեր հուզումեն և սա-

կայն կմնար անշարժ, թեերը կախ ինկած, անօգնական, տկար մարդու համակերպող դաժանությունը աչքերուն խորը։

— Հա՛յր, վեր, գնա՛նք։

Ծերունի Սեդրակ ուշքի եկավ։

Այո, այդ բոլորը անցյալ էր, հեռու, մութ անցյալ...

Զոհրաբ բահը ուսին կանգներ էր հորը դիմաց և կժպտեր ինքնագոհ, երջանիկ...

— Այսօր պլանս դերակատարեցի...

Ծերունին ընխերուն մեջ ժպիտ մը սողաց։ Նետեց սիգարետը ու ոտքի ելավ։

Դեպի քաղաք տանող ճամփուն մեջ մեծ եռուզեռ կար։ Մարդիկ տուն կվերադառնային ուտելիքի իրենց ամենօրյա պաշարով։ Ուրիշներ կշտապեին քաղաք, դեպի օպերա, թատրոն, կինո...

Մեղմ զեփյուռ մը կհոսեր ներքև Արաբկիրի բարձունքեն և քնքուշ շոյանքով կխաղար ծառերուն, ծաղիկներուն ու կանաչին հետ։

Հայր ու տղա կվերադառնային իրենց ժամանակավոր սենյակը։ Հայրը կխոսեր հաջորդ օրերու իրենց կատարելիք աշխատանքներուն մասին, իսկ Զոհրաբ, կարծես թե չէր լսեր, կքալեր անփույթ, կուրծքը երեկոյան զովությանն հանձնած և անհագորեն կներծծեր թարմ օդը։

Երջանիկ երգ մը կխաղար շրթներուն վրա։ Նոր կյանքին հորձանուտ երգը...

* * *

Օգոստոսի վերջերն էր արդեն։

Ծերունի Սեդրակի տունը, կապույտ պատուհաններով կժպտար Արաբկիրի բարձունքին։ Ծերունին բանջարանոցի թաց ածուներին հողի հաճելի բույրը կուգար։ Ան արդեն շուկա չէր երթար։ Այդ փոքրիկ քառակուսի տարածության վրա ամեն բան ուներ, ամեն տեսակ բանջարեղեն։ Տարիներով հողին կարոտած մարդու անհագությամբ, ամեն երեկոյան, ան ամեն մեկ թուփի քով կանգ կառներ, գոհունակությամբ կդիտեր աշխատանքին արդյունքը և կշշնջար.

— Հայրենիք, հողիդ մատաղ...

Երկար տաեներ ի վեր մոռցեր էր մտածել իր ծերության, մահվան մասին։ Կյանքը կկատարեր մարմնին մեջ։ Ի՜նչ լավ էր ապրիլ երկար, շատ երկար, տեսնել հնգամյակներ, հայրենիքի ամենօրյա վերելքը, աճը... Ապրիլ, ապրիլ այսպես երջանիկ...

Կշրջեր բանջարանոցին մեջ և կմտածեր Զոհրաբը ամուսնացնելու։

Երեկո մըն ալ, երբ ինք նորեն զբաղված էր բանջարանոցին մեջ, Զոհրաբ զգուշավոր մոտեցավ, ափը դրավ ծերունիին ուսին։

— Հայր, այդ ի՜նչ հրաշալի վարունգներ ունիս...

Ծերունին նայեցավ տղուն։ Արտակարգ շողք կար տղուն աչքերուն մեջ։

— Հա՜յր...

Ծերունին սպասեց։ Զգաց, որ տղան ուրախ, հաճելի բան մը ունի ըսելիք։ Թերևս հարսնացու էր ընտրեր...

— Դիտես ի՞նչ, արդեն որոշեր եմ համալսարան երթալ...

Ծերունին մեծ-մեծ բացավ մթագնած աչքերը, կարծես չընկալեց տղուն ըսածը, հետո աչքերը փոքրացան կրկին և բերանը կծկվեցավ իր սովորական փոքր սահմանին մեջ.

— Տղաս, այդ տարիքդ վերջ ի՞նչ համալսարան։ Արդեն ատեն է, որ դու երեխայի տեր դառնաս։ Այս տունը այսպես դատարկ մնալու չէ...

— Այդ իր կարգին,— հարեց Զոհրաբ կտրուկ։— Բայց ես պետք է սովորեմ։ Ի՞նչ ընենք, որ մեծ եմ տարիքով։ Հանցանքը իմս չէ։

Մառայլվեցավ, հոնքերը կիտեց, կարծես շատ տխուր բան մը հիշեց։

«Գուլպա, փողկապ, թաշկինակ» կրկնեց մեքենաբար, ու ծիծաղեցավ դառն...

Պատկեր մը անցյալեն պոկվեցավ և կանգ առավ մտածումին մեջ։

Օր մը շուկային մեջ հանդիպեր էր իր հին հարուստ դասընկերներեն մեկուն, որ ամերիկյան ծխամորճը բերանին աջ անկյունը, համալսարանական գրքեր արմուկին տակ, մոտեցեր էր իրեն, փողկապ մը գներ, ողորմության պես դրամը դրեր ափին մեջ, ու հեռացեր՝ շտապ քայլերով։ Իր հին, բթամիտ դասընկերը։

— Հա՛յր, պիտի սովորեմ, ամեն գնով, անպատճառ,— խոսեցավ որոշակի։

Ամբողջ մարնով կդողար։

Հայրը նշմարեց տղուն հուզումը։

— Ի՞նչ կուզես դառնալ,— հարցուց արդեն համաձայնված։

— Ի՞նչ...

Զոհրաբ շատ էր մտածել այդ հարցի մասին և չէր կարողացել որոշման մը հանդիլ։ Կուզեր ամեն բան դառնալ, ըլլալ օդաչու և շրջիլ լայնածավալ հայրենիքին վրայով, թռչիլ մինչև Ուրալ, Վլադիվոստոկ, Մոսկվա... Ըլլալ ջուրթակահար, նկարիչ, դուցե գեոլոգ, հայտնաբերել նոր հանքեր...

— Հայր չգիտեմ, չգիտեմ ի՞նչ դառնալ։ Դուն ըսե, ի՞նչ կուզես որ դառնամ։ Հայտնե փափագդ և ես կիրագործեմ։

Հորը բաղուկներեն պինդ բռնած, կնայեր անոր մշուշոտ աչքերուն մեջ և կկրկներ խենթորեն։

— Ի՞նչ կուզես որ դառնամ։

Երկուքին ալ աչքերեն երջանկությունը կշաղրվաներ։

— Ի՞նչ կուզես որ դառնամ,— մեղմ ձայնով կրկնեց ծերունին, հետո բարձրաձայն ավելցուց.

— Երջանիկ երկիր, ուր ամեն մարդ կարող է ուզածը դառնալ։ Տղաս, ճարտարապետ դարձիր, և հայրենիքիդ համար կառուցե տներ, բաղմաթիվ գեղեցիկ, մեծ տներ... Ճիշտ այդպես...

Թեր հորիզոնական երկարելով մատնանիշ ըրավ Բաղրամյան փողոցի վրա արագորեն բարձրացող գեղեցկատեսիլ շենքերը, հեռուն լույսերու մեջ լողացող Երևանը, անոր հոյաշեն ճարտարապետական կոթողները...

— Կառուցե տներ,— շարունակեց ծերունին ոգեվորված,— մեր հին Հայրենի ավերված տներու փոխա-

լեն, կատուցն անդուլ, և թող գան, հավաքվին անոնց մեջ հայեր, աշխարհի բոլոր ծագերեն...

Լուսինը ճառագայթները վառեր էր բանջարանոցին մեջ։ Ծուխերու բացվածքներեն կարմիր լոլիկներ ա-խորժակ դրդող թարմությամբ կժպտեին լուսնին։

Քովի հարևանի տունեն ուրախության ձայներ կլսվեին։

— Լցրեք ընկերներ, բաժակները լի.

Թող հայոց գինին մեզ անուշ լինի...

— Տղաս, այս դիշեր մենք ալ խմենք, ես և դու...

— Խմենք,— ընդառաջեց Զոհրաբ։

Հայրը պահ մը շփեց չածիլված դեմքը։

— Ափսոս որ մայրդ չտեսավ այս երջանիկ օրերը։ Ան միայն քու դառն օրերդ տեսավ։ Միայն ցավ տեսավ։

Զայնը կերերար հուզումեն...

Լռեց ու տխրորեն նայեցավ Զոհրաբին, որուն դեմքը մոայլվեր էր հիշատակումը իր բարի, միշտ անկողնին անկյունը կծկված մարը, որ կարոտավեր, ամեն անգամ, որ ինք խմած տուն կվերադառնար ուշ դիշերները...

— Ճիշտ է,— ըսավ,— ես շատ եմ տառապեցուցեր մայրս, բայց ես տառապեր եմ ավելի, շատ ավելի։ Հանցանքը այդ կյանքինն էր։ Կեղտոտ անիծյալ, այլասերված կյանքինը։ Ես չեմ ճանչնար այդ կամակոր տղան, որ էի առեներ, չեմ ուզեր հիշել պատկերը անոր։ Ան օտար ափերուն վրա ինկած, պանդուխտ, անժառանգ, անօգնական հայ երիտասարդն է։

Վայրկյան մը լռեց ու մտասույզ շարունակեց.

— Ինչո՞ւ միայն հայ, Հասանը՝ արաբ էր, Սթավ-

ին՝ հույն, ժյուրին՝ հրեա, բայց անոնք բոլորն ալ ինծի պես էին ապաստանն անհույս, ներկայով մոլորված։ Ի՞նչ կըլլար, եթե անոնք ալ ինձ պես բախտավորվեին, դառնային խոստումնալից ապագա ունեցող հպարտ քաղաքացիներ։

— Հիմա որ տեսնեն կհասկնա՞ն դիս,— խոսեցավ կամաց, ցած ձայնով,— ես այնքա՞ն փոխված եմ...

Վերջին բառերը արտասանեց հատ, հատ, ուժգին, ինքնավստահ...

Հետո կրունկին վրա դարձավ և գնաց գինի բերելու։

Հայրը խնձորենիի նորատունկ թուփ մը, մատներուն հկուն խնամքով կամրացներ ուղղաձիգ ցիցի մը։

Լուսնի քնքուշ շողերուն տակ, այդ ապիտակահեր ծերունին իր լավագույն սիրերգը կփսփսար նորատունկ ծառին։ Այն՝ որ չէր ըսած ոչ ոքի։ Իր վերջին ու լավագույն սիրերգը...

1947
Երևան

ԹԱՌԱՄՈՂ ՏԱՂԱՆԴԻՆԵՐ

Հեռվեն երկվող այդ ծանոթ, հին ու սիրված երգին բառերը Հասան Զարթիկին՝ իր սերտողության սեղանին առջև ու քամեցին Խախիծ մթնոլորտին մեջ։ Անոր հաջորդեցին ուրիշ երգեր նույնքան տխուր ու ցավալի շեշտով, մինչև որ թմրությունն մը պարուրեց սենյակը ամբողջ, ու թուլցուց Զարթիկի ջիղերը։ Դիրքը մնաց սեղանին վրա բաց, ու ինք մնաց սեղանին առջև՝ գլուխը ափերուն մեջ, երկար պահ մը։ Հետո ելավ դանդաղ և ուղղվեցավ դեպի անտառ նայող պատշգամբը...։

— Վազգենն է,— շշնջաց,— որքա՜ն ուշ է, և վաղը առաուն շատ կանուխ պիտի մեկնի... ինչո՞ւ արթնան է առակավին։

Պատշգամին մեկ անկյունը, գետինը նստած գտավ Սեդան, գլուխը բազրիկին, աչքերը կիսախուփ...,

Նայեցան իրարու երկա՜ր, երկա՜ր, վշտագին...

Երգը վերածվեցավ տակավ արցունքախառն սգոցի։ Լճացան Սեդայի աչքերը։ Հեծկլտուք մը կրծեց կուրծքը։

Սուլոցը մոռեցավ։

Լուսնի աղոտ լույս մը փռվեր էր աղջկանց և տղոց դպրոցական շենքերը իրարմե բաժնող աքասիաներու և նոճիներու ընդարձակ անտառին վրա։

Անտառին մեջ, աքասիաներու շողշողուն ծաղիկնե-

ու ընդմեջեն մաղվող լույսին տակ, կիսամութին, Զարթիկ նշմարեց Վազգենի շուքին խլրտիլը։ Ձեռքը դրավ Սեդայի մազերուն՝ դանդաղ ու մեղմ շոյանքով.

— Գնա՛ քնացիր, շատ ո՞ւշ է... շշնջաց։

— Ինչպե՞ս... ինչպե՞ս քնանամ... չեմ կրնար, հծծեց Սեդա։ Ձե՞ս լսեր թե ինչպե՞ս տխուր կերգե ան։ Ամբողջ երկու ժամե ի վեր, ան այսպես կթափառի անտառին մեջ, կսուլե ու կերգե։ Զարթի՛կ... ան վաղը պիտի մեկնի և մենք ոչինչ չխոսեցանք իրարու հետ։ Ես ինչպե՞ս քնանամ։ Գոնե այս վերջին գիշերը թո՛ղ, որ իր ձայնը լսեմ, իր ձայնով մխիթարվիմ։ Ո՞վ գիտե, երբ պիտի տեսնեմ զինքը անգամ մըն ալ, և կամ արդյո՞ք ան ու ես պիտի հանդիպինք իրարու ասկե ետք, կյանքի մեջ։ Արդյո՞ք...

Զարթիկ պատշգամին դուռը դոցեց առանց աղմուկի ու կրկին առանձնացավ սեղանին առջև։

— Խե՞ղճ Սեդա, խե՞ղճ ընկերուհիս, մեղմ շարժեցան շրթները, անցյալ տարի Վաչեի մեկնելու նախօրյակին, բաժանումի անմիջական ցավը ապրելու, սիրո քաղցր վրդովմունքներով տառապելու հերթը իմն էր։ Իսկ հիմա կյանքի նույն իրողության առջև կգտնվիս դուն։ Անշուշտ մենք երբեք չմտածեցինք, թե Վաչեն հետո դպրոցը կթողու և Վազգենը... Եվ հետո այսպես հանկարծորեն։ Մեր պատանեկան միամիտ ու անմեղունակ հոգիները չեն ըմբռներ, թե կյանքի դաժան իրականություններու առջև երազներ տեղի կուտան, կփշրվին, սերեր ակամայորեն կմոռացվին։ Երազները ապրեցնելու համար պետք է կյանքի այս ձևը փոխել, փշուր մը հայի համար մղվող պայքարի խարդախ այս ձևը։

Տարիներ առաջ այդ տղայքը եկան հեռավոր ափերն,

թողած իրենց ետին ալևոր ծնողներ, այրիացած մայրեր, որբացած քույրեր ու եղբայրներ։ Եկան ու խեղդեցին կարոտը իրենց սրտերուն մեջ, որպեսզի Միջերկրականի այս փոքր կղզին վրա դանվող հայկական կրթական այս հաստատության մեջ ուսանին, մարդ դառնան, և գիտելիքներով զինված՝ իջնեն կյանքի դաժան պայքարին մեջ։ Մեծ եղեռնեն մազապուրծ, թշվառության ու արցունք ժառանգած սելունդի մը այս որբերը, խոնավ ու փլած խրճիթներե, անոթի ու թշվառ մանկութենե մը եկած, եկան այս հաստատությունը, անհասանելի բարձունքներու երթալու տենչը իրենց աչքերուն մեջ...

Անոթի էին անոնց աչքերը, անոթի՝ անոնց հոգիները։ Անոնք հափշտակեցին գիրքը, հափշտակեցին ուսուցիչներու բերանեն ելնող ամեն մեկ խոսք ագահորեն։ Այս տղաքը իրենք զիրենք զգացին բախտավոր։ Բախտավոր անով՝ որ երբ հազարավոր իրենց նման հայ պանդուխտ պատանիներ, դպրոցի մը բարերար պատերեն ներս մտնելու հնարավորություն չունենալով, ամեն օր, օտար մայթերու վրա, ուրիշներու ձեռքին հացը խլելու, իրենց գոյությունը պահելու, տենդագին իրենց վաղքին մեջ, կայլատերին իբրև մարդ, իրենք ընդհակառակը, այս հաստատության մեջ կծանոթանային գրին ու գրականության, մարդկային մշակութային ժառանգություններուն, և Արարատի փեշերուն փռված իրենց հայրենիքի ծաղկոտին կհետեվեին։

Տարիներ առաջ հեռավոր հորիզոններե եկած վտիտ այդ տղաքը հասակ նետեցին։ Աճեցավ անոնց մարմինը, պայծառացավ անոնց մտածումը, բողբոջեցան անոնց

գգացումները։ Անոնց երևակայությունը ստացավ տեսիլք, անոնց հոգին հույսի մը նեցուկով ամրապնդվեցավ։ Թեև հեռավոր, բայց հայրենիք մը ունեին... Սուտ էին մարդիկ, երբ կըսեին թե իրենք կորսնցուցած են իրենց հայրենիքը սու հավետ։ Սուտ էին, իսկոնք որը չէին։

Անոնց մտածումին մեջ բոցավառություն կար։

«Մի՛ լար, մի՛ թացիր աչերդդ,
«Աչքիդ լույսն ափսոս է»...

Նրգին բառերը հատ հատ ինկան առջևի կրքին վրա և անոնց արձագանքը ցնցեց Զարթիկի լսողությունը։ Ան քանի մը անգամ թարթեց աչքերը։ Ընդհատվեցավ մտածումներու շարունակությունը։

Վաղգեն դեռ չէր քնացեր, ան դեռ այդպես թախծալին կերդեր։ Դժվար էր, շատ տխուր, ամեն բան կիսավարտ թողուլ ու մեկնիլ։ Չէր ուզեր։ Անոր հոգին ուներ թռիչք դեպի արվեստի բարձունքները։ Ան նկարիչ էր։ Ուներ գույներու, երանգներու սիրած իր աշխարհը։ Տարիներու ընթացքին, նկարչության ակադեմիկ տեխնիկայի և ըմբռնումներու առընթեր, ան հայտնաբերեր էր տաղանդավոր ինքնուրույնություն մը։ Արդեն իր նկարներեն մի քանի հատը ցուցադրվեր էին կղզու հայտնի նկարիչներու կողքին։ Բայց ահա իր երազներն ու իղձերը կբախվեին դառն իրականության։ Պետք է մեկներ... Նույն ճամփով էին մեկներ իր երկու խստամնալից ընկերները՝ Վաչե ու Պերճ։

Վաչեի հայրը գործարանի մը մեջ աշխատած միջոցին՝ արկածով կորսնցուցեր էր թևը, և դուրս եկեր աշխատանքեն։ Բան մը՝ որ ստիպեր էր Վաչեին հեռանալու դպրոցեն, թաղելու իդեալ ու երազ, սկսելու հա-

մար կյանքի մեջ անժամանակ ուղու ուժասպառիր իր վաղքը։

Քանի մը ամիս առաջ մեկներ էր Պերճ, կանխահասորեն ծերացած հոր մը օգնելու, բազմանդամ ընտանիքի մը նեցուկ ըլլալու սիրողականության տակ։

Անոնց մեկնումով դպրոցին գրական ու մշակութային գործունեության մեջ նշմարելի էր խոշոր բաց մը։ Նվազեր էին գրական երեկույթները ու մարեր էր հոն տիրող ջերմ ու խանդավառ շունչը։ Տղաք հորանջելով՝ ժամանակն առաջ, գաղտագողի կհեռանային հավաքույթներեն... Չկար Վաչեն, որ իր հաղթանդամ ֆիզիկականով դրսևորվող ուժեղ անհատականությամբ, հեղինակության տարածեր ուղոց վրա։ Մեկներ էր Պերճը՝ որ իր լոպաշունչ ելույթներով գիտեր կապել բոլորին նայվածքը իրեն։

— Տարբե՞ր էին Վաչն ու Պերճ,— կիսոսեին անոնք։— Ունեին գրելու և խոսելու տաղանդ, կաղմակերպելու արտակարգ կարողություն։

Երկար տարիներ իվեր գաղրեր էր նաև այդ ուղոց օրով, անոնց ջանքերով, մեծ աշխույժով ու հույսերով սկսված գրական պարբերաթերթը, որ նպատակ ուներ հատատուության ուսանողներուն մեջեն հայտնաբերել գրական շնորհքով օժտվածները, քաջալերել զանոնք, ամրապնդել անոնց դողդոջուն քայլերը։

Գաղրեր էր թերթը, և Վազգենի նկարազարդած կողքը մնացեր էր հին ու դեղնած թուղթերու արանքին, իր հրապույրը կորսնցուցած սիրված աղջկա մը նկարին պես։ Մինչդեռ Վազգեն քանի՞ անքուն գիշերներ էր անցուցեր այդ նկարով, հարազատ կերպով պատկերելու համար։ Երեկվան այդ որբերը, որոնց աչքերը թեև չէին ձերբա-

վառված վեր իրենց ծնողներուն ապրած ջարդերու և ավերածության սարսափեն, բայց անոնց մեջ նոր կյանքի մը ճառագայթներուն ջերմությունը կսուզվեր դանդաղ, բայց համառորեն...

Այո՛, հաստատության տղաքը կսիրեին Վաչեն, Պերճն ու Վազգենը, որովհետև երբ ուսուցիչներին ոմանք կուրանային Արագածի փեշերուն վրա ծաղկող հայրենիքի մը գոյությունն իսկ, իսկ ուրիշներ վերապահությամբ և զգուշությամբ միայն կակնարկեին անոր, համարելով այդպիսի խոսակցություններ անօգուտ և վտանգավոր, որը այդ տղաքը իրենց երևակայության միջեն լսեցին իրենց հայրենիքին հաղթերգը, անոր շունչով տաքցան անոնց հալածված հոգիները։ Որովհետև անոնք զգացին, ըմբռնեցին երեցներեն ավելի, թե առանց հողի, առանց հայրենիքի ու այդտեղ տիրող կարգ ու սարքին, իրենց կյանքը անօգուտ մաքառում մըն է։ Անոնք լիցք ստացան իրենց հեռավոր հայրենիքեն և անով ներշնչեցին իրենց ընկերները։

Բայց մեկնեցան այդ երկուքը և վարը կմնային Վազգեն։ Մեկնեցան ու երկուսդ մ՝ իսկ՝ չգրեցին իրենց ընկերներուն։ Զարթիկ երկար սպասեց, որ գոնե Վաչե կգրեր իրեն։ Չէ՞ որ խոստացեր էր վերջին գիրկընդխառնումի ատեն... Ինչո՞ւ չէր գրած։

Հարցում մը՝ որ ամենեն ավելի կզբաղցներ անոր մտածումը սակայն։

Ի՞նչ կընեին հիմա այդ երկուքը, իր լավագույն ընկերները։ Ի՞նչ էր վիճակվեր անոնց կյանքի մեջ։ Ի՞նչ պիտի ըլլար Վազգենը, փոքրամարմին, նիհար, մազերը անփութորեն ճակտին վրա թափթփած տաղանդավոր այդ նկարիչը։ Միթե՞ ան պիտի չխամրեր...

Զարթիկ նայեցավ սեղանին վրա շարված գիրքերուն ու հաջորդ օրվան դասացուցակին։

Անտարբերությամբ ցնցեց ուսերը թեթև, գոցեց սեղանին վրա բաց մնացած գիրքը և վախկոտ քայլերով սպրդեցավ ննջասրահին ներս։ Գիշերապահը խոր կընընջեր...

Այնքա՜ն քնքուշ, կախարդական լուսնի լույս մըն էր ինկեր մինչև հեռուն, բլուրի մը վրա բարձրացող հաստատության փոքրիկ հիվանդանոցը, որը սրտերու սիրո այդ օրորանը։ Չէ՞ որ հիվանդության պահերուն մարդիկ ավելի խոր կզգան իրենց կարոտները, զրկանքները, մենակությունը։ Չէ՞ որ այդ շրջանին քնքշագին խոսքեր ու ժպիտներ ավելի արագ կթափանցեն սրտերե ներս։ Այդտեղ էին սկսեր Վաչեի ու իր սերը, այնտեղ՝ Վազգենի ու Սեղայինը, այնտեղ՝ ուրիշ շատերունը...

Հիվանդանո՜ցը...

Զարթիկ արտակարգորեն հուզական էր դարձեր այդ գիշեր։ Հիշատակներու վերապրումով ամբողջ մարմինը դող ու սարսուռի էր վերածվեր։ Մեկ տարվա հեռավորության ընթացքին, այդ օր, ան ամենեն ավելի զգաց Վաչեի բացակայությունը...

Պատուհանին առջևեն հեռացավ և փորձեց քնանալ։ Դարձավ աջեն ձախ ու ձախեն աջ հաջորդաբար։ Պարապություն մը մեծցավ, ծավալեցավ շուրջը և սիրտը տրոփեց անարձագանք՝ այդ պարապին մեջ...

Մեկեն ձեռք մը դպավ ձեռքին։ Հանկարծորեն բացվող աչքերուն դիմաց կայներ էր Սեդա, ածխագույն մազերը ճերմակ ու երկար գիշերանոցին վրա ցիրուցան։

Սեդա նստավ Զարթիկի անկողնին վրա, անոր ձեռքերը իր ափերուն մեջ ուժգնորեն սեղմած։

— Կխորհի՞ս թե Վազգեն զիս պիտի մոռնա, հարցուց, ձայնին մեջ պահվտիլ ուզող դողով մը։

Հաստատության խոշոր ժամացույցը երկու զարկ նիզակեց գիշերվան հանդարտ լռության մեջ, երկու վրդովող, մտահոգիչ զարկ։

Երկու ընկերուհիները նայեցան իրարու և հետո գիշերապահին։

Սեդայի տժգույն ու նիհար մարմնին մեջ հուզումի ալիքներ կվեռվռտեին...

— Դուն լավ կճանչնաս Վազգենը,— շարունակեց Սեդա,— ավելի լավ քան թե ես։ Դուն ավելի շատ ես հանդիպած իրեն, ավելի շատ խոսած հետը։ Զորս տարիե իվեր ան քու դասընկերն է, գիտես իր տեսակետները սիրո ու կյանքի մասին։ Ըսե՛, ի՞նչ է կարծիքդ իր նկատմամբ։

— Գիտեմ թե ան կսիրե քեզ... շշնջաց։ Գիտեմ նաև թե ան սովորական, աշխարհիկ տղա մը չէ։ Կսիրի Մարդիկը, կհարգի անոնց ամենեն փոքր զգացումներն իսկ, և մանավանդ գիտե հարգել իր խոստումները, բայց.— Լռեց մեկեն։

Վազգենի մասին ունէ հաստատում, որքա՞ն ալ որ ան բխած ըլլար անոր նկարագրի խոր ճանաչումեն, կրնար կերպարանափոխվիլ կյանքի քմահաճ երևույթներու ազդեցությամբ։ Վազգեն կմեկներ առավոտ շուտ, օգնելու կգած, տարիներով ուրիշներու լվածքը լվալեն ձեռքերը հյուծած, ծակծկած մորը, կմեկներ հանդիպելու պատանի եղբորը, որ ոսկրախտե կտառապեր և հիվանդանոց փոխադրվելու նյութական միջոցներ չունե-

նալու հետևանքով, պատապարտված էր մնալ այդ խոնավ սենյակին մեջ անխնամ, և մահանալ ամեն օր, քիչ քիչ, խեղճ ու անճար մորը արցունքոտ աչքերուն առջև... Եվ վերջապես ան կմեկներ նեցուկ հանդիսանալու չորս փոքրիկ քույրերուն՝ որոնք աղքատիկ հագուստներու մեջ, աչքերնին ակնկալությամբ իրեն էին ուղղած...: Ան պիտի երթար անոնց հացին համար պայքարելու, իր վոիտ ուսերուն վրա քայքայված ընտանիքի մը տաժանակիր բեռը վերցնելու: Արդյո՞ք ան կմնար նույն տղան: Երբ ամեն ժամ ու ամեն րոպե հանդիպեր մարդոց կեղծիքին, երբ տեսներ թե կտոր մը հացի համար մարդիկ ինչպե՛ս կուզեն իրար խեղդեր, ինչպես իրարու կհայհոյեն, իրար կանեպատվեն, և կամ քծնելով հարուստ ու փարթամ մարդոց, իրարու կդավադրեն, երբ տեսներ թե մարդիկ որքան կփոքրանան, կգռեհկանան նյութի առջև, արդյո՞ք ան չէր կորսնցներ մարդու ապագային մասին ունեցած պայծառ ու հավատավոր իր կեցվածքը...

Ի՞նչ խոսեր Սեդային, ինչո՞վ հուսադրեր զայն...

Այսպես, հակառակ Սեդայի հետաքրքրության և հակառակ զայն հանդարտեցնելու իր մտահոգության, Զարթիկ չխոսեցավ...: Անցյալ տարի, Վաչեի մեկնած օրը, նույն մտահոգությունը սրտին մեջ, ան նույն հարցը ուղղեր էր ինք իրեն: Տարի մըն էր անցեր արդեն, և ոչ մեկ տող չէր ստացեր անկե: Մոռցե՞ր էր զինք:

Ինչպե՞ս կարող են մոռցվիլ սիրո առաջին դողեր, ձեռքերու անդրանիկ ու երկյուղած հանդիպումներ, և ի վերջո, պատանեկան վարդագույն երազներու ամբողջ աշխարհ մը: Մի՞թե կմոռցվի մայիսյան սիրավառ վարդերու բույրը, և աղջկան մը առաջին հրդեհված ու ա-

մոթխած նայվածքը, որ կիյնա տղու մը դեռևս կյանքին չբացված աչքերուն դիմաց... Բայց Վաչե ի՞նչ գրեր իրեն, երբ ատկե հետո գրված ամեն մեկ տող պետք է լուրջ նշանակություն ունենար երկուքին համար ալ, հանդիսանար՝ ներկան իրենց միասնական ապագային կապող կամուրջը։ Իսկ Զարթիկ գիտեր թե Վաչեի առօրյան այնքան դաժան էր, որ մեռցուցեր էր անոր մեջ ապագայի ամեն մեկ երազ ու հույս։ Որբ ու աղքատ տղու մը համար շատ չէ՞ր սիրո ու ժպիտի հույսն իսկ։ Շատ. չէ՞ր։

Զարթիկ մեկ տարվա բաժանումի ընթացքին հասկըցեր էր այսքան մը իրականություն։ Բայց հիմա, երբ Սեդա սիրո բաժանումի և տարակուսանքի ամբողջ տադնապը կապրեր, ինք ինչպե՞ս բացատրեր անոր, որ շուտով այդ միամիտ ու անուշ սերը կդառնա անվերադարձ քաղցր հուշ մը։ Ի՞նչ համարձակությամբ ըսեր անոր, որ քանի մը տարի ետք, նույնիսկ եթե ան հանդիպի Վազգենին չուզեր ճանչնալ զայն, չի ճանչնար զայն, որովհետև սիրահար ու բոցավառ այդ տղուն խրտվիլակը կմնա միայն կյանքի մեջ։

Այո, բոլոր զգացումներեն ու երազներեն վեր կա կտոր մը հացի պայքարը։ Վաչեին պես, Պերճին պես, Վազգեն ալ կզոհաբերե իր դարնանային երազները, անմեղունակ հոգին ու տաղանդը...

Սեդայի հոգնած նայվածքը ինկավ Զարթիկի դեմքին, ձեռքերը թուլացան ու ելավ ոտքի կարծես դժվարով, զորավոր ճիգով մը...

— Կրնար չերթալ, կրնար տակավին հոս մնալ,— հծծեց։— Գիտեր, որ պետք ունի իրեն։ Մայրը կրնար

սպասել, ինչպես սպասեց մինչև հիմա։ Ի՞նչ կարող է ընել Վազգեն կիսամարտ ուսումով... Ի՞նչ...։

Զարթիկի նայվածքին առջևեն կայծակի արագությամբ անցավ Վազգենի ամբողջ ընտանիքը անորոշությունեն կմախքացած դեմքերով...

— Զերթա՞լ... ինչպե՞ս... դողդոջեց մեկեն։

Սեղա հեռացավ անխոս, Թախծոտ համակերպումի մը շղարշը իջեցուցած աչքերուն մեջ կայծկլտող բողոքին դեմ... Բողոք մը՝ որ ինքն ալ չէր գիտեր թե որո՞ւ դեմ էր ուղղված։ Վազգենը իրմե խլողի՞ն դեմ... Բայց ո՞վ էր դայն խլողը։ Անոր մա՞յրը, ընտանի՞քը։ Անոնք ալ զոհեր էին սակայն, խեղճ, անզոր զոհեր։ Եվ մինչ Սեղա երկար դիշերանոցին փեշերը վեր հավաքած, շտապ կիջներ ննջասրահի աստիճաններեն, նայվածքը հանդիպեցավ հաստատությանն տնորենի նկարին։ Հիշեց անոր հսկայական փորը, հիշեց թե ան ի՞նչպես ամեն օր ուսանողներուն որդնոտած ձիթապտուղ կկերցներ, իսկ ինք բաղմատեսակ համեղ ճաշերու շատությենեն կճարպոտեր։ Հիշեց թե ան ամեն անգամ մեծ կրքով հայրենիքին, հոն տիրող իրավակարգին դեմ կիսոսեր և անոր համար ալ Վազգեն կատեր դայն...

Սեղա գլուխը ետ դարձուց, երկա՞ր նայեցավ նկարին, բողոքը գնդակի մը վերածելով նետեց տնորենին կլոր, դուրս ցցված փորին ճիշդ մեջտեղը և հետո նորեն արագ-արագ, դրեթե վազելով իջավ երկրորդ հարկ...

Բավական ետք, շենքի վարի հարկեն նվադվող դաշնակը, Սեղայի արթնությունը ըսավ Զարթիկի։ Մինչև առտու անոր մատներու արվեստագետ հպումին տակ՝ զուսպ ու ցավատանջ շեշտով Շոպեն լացավ իր մա-

հերգը, որ երկարաձգվեցավ շուրջի անտառներուն ու բարայրներուն մեջ ու վերածվեցավ միակ հարցումի մը.

— Զարթիկ, կխորհի՞ս որ Վազգեն պիտի մոռնա գիս...

* * *

Այս հարցումը եղավ հաճախանքը Սեղայի մտածումին, մանավանդ երբ անցան ամիսներ, հետո տարի մը, ու ոչ մեկ լուր եկավ Վազգենեն։ Հաջորդ տարին Հաստատությունը վերջացուց ու մեկնեցավ Զարթիկ։ Հետզհետե իրար ետևե մեկնեցան ծանոթ դեմքեր, ընկերներ, մտերիմներ։ Ամայացավ շուրջը։ Քանի՛ մոռնցան շրջանավարտ ըլլալու ամիսները, ապագայի անորոշությունն ու սարսափը սկսավ տպրիլ։ Տարիներով անքո՛ւն գիշերներ էր անցուցեր գրքերու վրա, ամեն օր ժամերով դաշնամուրին վրա հոգներ էին մատները, իսկ ի՞նչ պիտի ըլլար արդյունքը։ Ո՞ւր պիտի աշխատեր։ Այնքա՛ն դժվար էր աշխատանք գտնել, երբ անգործություն կար ամեն կողմ։ Երբեմն Զարթիկ կայցելեր իրեն։ Տարի մը անգործ թափառելե, հաղարումեկ դուռ բախելե վերջ, ան հիմա կաշխատեր իբրև օգնական քարտուղարուհի առևտրական հիմնարկի մը մեջ, շատ չնչին աշխատավարձով։ Զարթիկ շատ մռայլ էր դարձեր, սակավախոս, կարծես ծերացեր էր։ Վաչեի, Պերճի և Վազգենի մասին խոսք իսկ չկար։

Սեղա օրեր շարունակ չմոտեցավ դաշնամուրին։ Ի՞նչին էր պետք, որ ինք շնորհք ուներ երաժշտության մեջ։ Այդ բոլորը սակավաթիվ հարուստ աղջիկներու

համար էին, փարթամության մեջ ձանձրացող աղջիկնե-
րու համար։ Ինք վազը ապրուստի ետևեն պիտի վազեր,
նվագելու ժամանակ ու տուիթ պիտի չունենար։ Դաշնա-
մուր ուրկե՞ ձեռքը պիտի անցներ...։ Սեղայի մեջ սկսեր
էր հողեկան քայքայում մը՝ ապագայի արհավիրքը, որ
դժբախտաբար միայն իրը չէր, այլ բոլորինը, հաստա-
տության բոլոր ուսանողներունը։ Կաղալով, քաշքշվելով
վերջացուց ուսումնական տարեշրջանը։ Հետո, չորս ա-
միս, թիթեղե կաթիլող տանիքով խոնավ վարժարանի
մը մեջ պաշտոնավարելե վերջ իբրև ուսուցչուհի, պա-
ղատության մը հետևանքով թոքատապե բռնվեցավ և
այլևս չվերականգնեցավ։ Օր մըն ալ չոր հազ մը քամեց
արյուն անոր թոքերեն։

Բայց ամեն անգամ, որ ան, գիշերվան ուշ ատենով
նոտեր ստնատորիումի սեղանին առջև, ճկուն մատները
ստեղնաշարի կարոտով՝ կշարժեին տախտակին վրա, և
նույն հարցումը, նույն դաժանությամբ կդալարեր մտա-
ծումը.

— Զարթիկ, Վազգեն կմոռնա՞ զիս, կմոռնա՞։

Ու կոկորդեն ելլող չոր հազ մը՝

— Ի՞նչ կհուսաս տակավին... ի՞նչ... ի՞նչ...

Հետո հեգնանքի խրտվիլակը իր գլուխը ցցած Սե-
դայի տառապակոծ մտածումներուն մեջ.

—Դուն դաշնակահարուհի, ան նկարիչ։ Լա՞վ է, լա՞վ
է, լա՞վ է... կծիծաղեր։

Սեղա կսկսեր լալ ջղաձգորեն, երկա՞ր, երկա՞ր, և
պայրույթով բռունցքները կզարներ սեղանին։

Մեռեր էին իր երազները, մեռեր էր կայտառ այդ
սերունդը։ Խամրեր էին ծիլեր, որ կրնային ծառ դառնալ,
թառամեր էին տաղանդներ...։

Հազը կսաստկանար, կշարշարեր կուրծքը, մատները կսառեին և սարսափահար տեսիլք մը աչքերուն մեջ, ան կսպասեր առավոտյան արևու ճառագայթներու ջերմության։ Այնքան դժվար ու ծանր կշնչեր։ Ձախ ափով, ուժեղ կճնշեր կուրծքը.

— Մայր՜իկ։

Կփակեր աչքերը։

Ուրկե՞ բնաղդական այդ աղերսական աղաղակը։

Մայր չուներ, որբ էր, անտուն, անհայրենիք...

Սպառվեր էր այս սերունդը ընդունայն, դոնե փլըրկվեր գալիքը, դոնե կյանքը ժպտեր նորածին մանուկներուն...

Աչքերուն այս մռայլ տեսիլքը կփոխարինվեր մեկ ուրիշով։ Կտեսներ Վազգենը, ճիշտ առաջվան պես վտիտ ուսերով, ճակատն ի՛վար թափթփած մազերով, կրակված աչքերով...

Հետո Զարթիկը, Վաչեն, Պերճը...

— Գալիքը կփրկվի հայրենիքով, կշարժեին անոր շրթները հավատքով... Հեռավո՞ր մեր հայրենիքը պիտի իր լույսը տարածե մեր այս տխուր կյանքին վրա...

Սեղայի հալը կվերսկսեր....

Թո՛ղ փրկվի գալիքը։ Մենք թառամեցանք...

ՈՏՔ ՄԸ ԲՆԱԿ ԿԱՐԵՎՈՐ ՉԷՐ

Բոլոր այն տղոց՝ որ գաղափարական
գեսնի վրա մնացին անկատար։

Ամբողջ գիշեր Վաչեի ցավագին ձայնը գոռաց հիվանդանոցին մեջ ահաբեկող սաստկությամբ։ Բոլոր մյուս հիվանդները արթնցան իրենց քունեն, իրենց թմրութենեն, և իրենց ցավերուն վերհիշումովը վրդովված՝ դիմեցին հիվանդապահուհիին՝ ամոքումի մը համար։ Սակայն ճերմակ զգեստով այդ երիտասարդուհին, հիվանդանոցին մեջ ունեցած տարիներու իր փորձառությամբ զգաց, որ այդ գիշեր Վաչեն միայն իսկապես պետք ուներ իրեն։ Մինչև առաու տղան սնարին քով կեցած՝ լսեց անուն մը միայն... Ալի՜։

Վիրաբուժական գործողութենեն սթափող հիվանդները, գերագույն ցավի ու տկարության այդ պահուն, կապավինեին իրենց մեծագույն սերին՝ մոր մը, սիրված տղու կամ աղջկա մը...։

Հիվանդապահուհին այդպես երկար ժամեր դիտելե հետք ցավեն զալարվող Վաչեի հաղթանդամ մարմինը, և կիրարկելե վերջ կարելի բոլոր միջոցները, երբ տեսավ թե մորֆինի ներարկումն իսկ շատ ազդեցություն չբրավ, ձեռքը դրավ անոր ճակտին ու մեղմ, շատ մեղմ ձայնով մը, գրեթե վարանումով, հարցուց.

— Կուզե՞ք որ Ալիսը կանչել տամ...։

Զղջաց... քանի որ այդ նախադասութենեն ետք Վաչե եղերականորեն հառաչեց.

— Ալի՜ս...։ Ան պիտի չգա... Ես մեկ ոտք ունիմ միայն։ Այո՛...։ Մեկ ոտք։ Եվ կունենամ երկու անթաթուպ։ Ալիս ա՛լ պիտի չգա... բնա՜վ... բնա՜վ... Ան արդեն մոռցած է զիս...

Հիվանդապահուհին ակնարանեն դիտեց Վաչեի լայն ուսերը, անկողնին ամբողջ երկայնքը գոցող անոր հաղթահասակ մարմինը, և խոնավություն մը մշուշեց աչքերը։

— Ոտք մը բնա՜վ կարևոր չէ,— շշնջաց... — այնքան ատեն, որ բան չի պակսիր քու անհատականութենեդ... ոտք մը բնավ կարևոր չէ...։

*
* *

Իսկ Ալիս այդ դիշեր քնացավ խորո՜ւնկ, անվրդով։ Քնացավ՝ ինչպես կքնանար ամեն դիշեր դբասենյակի վերադարձին, ամբողջ օր նույն ու նման ձևով, նույն ու նման գրություններ մեքենագրելե հոգնած։ Ան ոչինչ գիտեր որսորդության ընթացքին Վաչեի ունեցած արկածին, ոտքին մեջ մխված փամփուշտին և անոր հաջորդող թունավորումին մասին։ Ոչինչ գիտեր...։ Սրկար ատեն մնաց այդպես իրողության անտեղյակ։ Ատենն մը ի վեր խզված էր ամեն հարաբերություն Վաչեի, անոր շրջանակին և իր միջև...։ Վաչեի բարեկամները երբեմն կհանդիպեին իրեն ճամփուն վրա

և կանգնեին առանց դինք բարևելու, իրենց նայվածքին խայթոցին թույնը պարպելով իր սիրող հոգիին վրա։ Հակառակ ասոր, Ալիս կսիրեր անոնց այդ ձևը, Վաշեի հանդեպ ունեցած բարեկամական անոնց անկեղծ կեցվածքը...։ Անոնց համար ինք Վաշեի սիրին դեմ դավաճանող աղջիկն էր, ի շահ նոր բարեկամներու, ի շահ անոնց պոռացող ու մեծ խոսքերուն...։ Եվ սակայն Ալիս կսիրեր Վաշեն...։ Կսիրեր... բայց բնավ ճիգ չըրավ իրենց միջև ստեղծված հեռավորությունը ծածկելու, մինչև որ Վաշեի հաշմանդամ ըլլալուն լուրը հասավ իրեն...։ Այն ատեն ան լացավ ամբողջ գիշերներ, անրո՞ն, հիշատակներե հաճախված։

•

Վաշե ու Ալիս նույն վարժարանին մեջ ուսուցիչ էին։ Ան՝ աշակերտներն սիրված, վառվռուն ու սև աչքերով, կայտառ երիտասարդ մըն էր։ Ալիս և Վաշե շատով բարեկամացան իրարու հետ, և հասկցան զիրար։ Երկուքն ալ գրականության և հասարակական գործերու հանդեպ նույն մոլեգին հետաքրքրությունն ու սերը ունեին..., հայրենիքի հանդեպ՝ նույն քաղաքական ըմբռնումները։ Ասոնք պատճառներ էին, որ զիրենք մոտեցնեն իրարու...։

Գիշեր մըն էր, մութ ու ցուրտ գիշեր մը... տարիներ առաջ։ Միասին թատերական ներկայացումե մը կվերադառնային։ Վաշեի ղեկավարած աշակերտական թատերական ներկայացումեն։ Երկար ատեն քալեցին

լուռ։ Ալիսի համար անբնական էր լուռ մնալ։ Ան միշտ խոսող և խոսակցության մեջ ամբողջ խանդն և ուշիմությունը դնող աղջիկ մըն էր...։ Սակայն այդ գիշեր մնաց լուռ։ Մնացին լուռ երկար պահ մը, մինչև որ Ալիս տկար ձայնով մը.

— Վաչե,— ըսավ,— հոյակապ հաջողություն մըն էր քուկդ այս գիշեր։ Որքա՜ն խանդավառ էին աշակերտները։ Տղաքը այդ որքա՜ն լավ կխաղային իրենց դերերը...

Քիչ մը լռությենե վերջ շարունակեց.

— Շատ կսիրես դերդ, աշակերտներդ, դպրոցը, այնպես չէ՞...։ Բայց ափսո՜ս...

— Ինչո՞ւ,— հարցուց Վաչե հետաքրքիր։

— Իհարկե,— ձայնը բարձրացուց Ալիս, ի՞նչ արժեք ունի, որ դուն բազմատեսակ ձիրքերով օժտված երիտասարդ մըն ես։ Հիմա միայն սովորական ուսուցիչ մըն ես, և տարիներով կշարունակես մնալ այդպես։ Չկա բարձրանալու հնարավորություն և հեռանկար...։ Մինչդեռ եթե դուն հայրենիքիդ մեջ ըլլայիր, մանավանդ այնպիսի երջանիկ հայրենիքի մը մեջ, ինչպիսին է մերը, ուր մարդը իբրև մարդ հարգանք ու արժեք ունի, դուն կարող էիր միշտ առաջ երթալ։ Մեծ մեկը դառնալ։ Մինչդեռ հոս...

Լռեց։ Զուզեց ավելի խոսիլ։

— Շարունակե՛,— հարեց Վաչե։ Ձայնը կդողար զսպված ուժե մը։

— Հոս, միտքով քեզմե ստորադաս մարդերը, դրամի ուժով կիշխեն քու վրադ։ Դուն չես կրնար չենթարկվիլ, քանի որ մայր ունիս, քույրեր ունիս, քանի որ ապրելու պետք ունիս։ Հոս չես կրնար քու նախասի-

թուիյուններուդ մեջ խորանալ, քանի որ օրվան աշխատանքը տզրուկի պես կքամե սրյունիդ թարմությունը...։ Հոս չես կրնար բարձրագույն ուսում ստանալ... քանի որ...

Զայնը մարեցավ կրկին։ Տարօրինակ դառնություն մը կար դեմքին վրա։ Իսկ խորը աչքերուն՝ թունավոր ատելություն մը, չես գիտեր որոնց դեմ...։

Վաչե ուժ մըն էր։ Ալիս դիտեր այդ։ Գիտեր նաև թե ան չէր կրնար համալսարան հաճախել։ Եվ ավելի բան մը, ան գիտեր թե Վաչե երկու տարի, շարունակ դիմեր էր զանազան ուսանողական ֆոնտերու և մերժվեր, քանի որ հանձնախումբերու մեջ ծանոթներ չուներ, և կամ թերևս անոր համար՝ որ չէր ուզած ծախել ինքզինք...։ Մարդիկ դրամը տալե առաջ կսակարկեին, կուզեին իրենց քաղաքական հետամնաց համոզումները պարտադրել, իրենց ազդեցության տակ ճզմել ենթական...։

— Դալ տարի ուսուցչուհի պիտի չմնամ,— շարունակեց Ալիս։— Պիտի ուզեի, որ դո՛ւն ալ տարբեր գործ մը դտնեիր... Կարժե՞ երիտասարդություն մը վչացնել։

Վաչե կանգ առավ։ Բռնեց Ալիսի բազուկները իր մկաններուն ամբողջ ուժովը և հպանցիկ, անդրանիկ համբույրն մը ետք, գրեթե աղերսական ըսավ.

— Ալի՛ս, մնացի՛ր ուսուցչուհի...։ Դուն բացառիկ խելքով օժտված աղջիկ մըն ես։ Պետք ունինք քեզի։ Մեր երեխաները մեծ մասամբ հանձնված են անգրագետ ուսուցչուհիներու։ Ալիս, մի՛ դիմեր տարբեր գործի...։ Կայլատերիս, կմոռնաս շատ մը բաներ, շատ մը կարևոր բաներ։ Կմոռնաս նաև զիս...։

Հետո թուլացավ հանկարծ։ Հավաքեց ինքզինք։

Կծկվեցավ ինքն իր մեջ։ Միայն աչքերը շարունակեցին մնալ՝ Ալիսի աչքերուն մեջ։

«Կայլասերիս Ալի՞ս...»

Անցա՞ն ամիսներ։ Անցան տարիներ։ Ալիս ունեցավ ընկերական լայն շրջանակ։ Աղջեցիկ բարեկամներ իրեն դտան գործ, խոշոր առևտրական ընկերության մը մեջ։ Մարդիկ ըսին, կրկնեցին, հանկերգեցին թե ինք չափազանց խելացի աղջիկ մըն էր, թե բացառիկ մեկը կարող է դառնալ օր մը։ Գգվեցին փառասիրությունը։ Խոսեցան ու խոստացան։ Ցույց տվին բարձրացումի հնարավորություններ։ Բայց ամեն անգամ, որ խոստումները գործնականի վերածելու խնդրին մոտեցան, սկսան սակարկել.

— Քեզ համալսարան ղրկելու միջոցներ կտեղծենք, պայմանով, որ շրջանավարտ ըլլալեդ ետք, աշխատիս մեզի համար, մոռնաս սա քու տխմար խանդավառությունդ հայրենիքիդ նկատմամբ, և մանավանդ բնավ չխոսիս հոն տիրող կարգերու մասին...

Այո՛, ունեին դրամ, կուզեին գնել։ Մարդու և գաղափարներու առևտուր...

Ալիս հեռացավ անոնցմե նողկանքով։ Թողուց անոնց գտած գործը։ Եղավ պարզ մեքենագրող մը զինվորական ընկերության մը մեջ։ Փնտրեց Վաչեն, մարդությունն ու պարզությունը անոր հոգիին.... Փնտրեց զայն, երբ առանձին էր սենյակին մեջ ու հուսահատ, փնտրեց զայն, երբ ուզեց լեցվիլ հայրենիքով, երբ նայեցավ սեղանին վրա փոշոտած, չկարդացված գրքերուն...։ Սակայն ճիգ չբրավ զայն գտնելու, մինչև որ անոր հաշմանդամ ըլլալուն լուրը հասավ իրեն...։ Այն

տաեն ալ ան չգնաց Վաշեի տեսութեան։ Վախցաւ, որ կարեկցական այցելութեան մը ապաւորութիւնը ձգեր այդ, քան թե իսկապես զգացուած պահանջքի մը արտահայտութիւնը ըլլար։

*
* *

Զմեռ օր մըն էր, անձրևոտ, փոթորկոտ։

Կեսօրին գործեն ելլելն վերջ, Ալիս փորձեց հանրակառք առնել։ Չհաջողեցաւ։ Հանրակառքերը եկան ու անցան խճողված։ Ի վերջո որոշեց տուն չերթալ։ Քալեց մինչև անկյունի անուշեղենի խանութը։ Ներս մըտնելն առաջ վարանեցաւ։ Ատենոք Վաշե և ինք իրենց նախասիրած անկյունը ունեին անկե ներս։ Մտնելեն ետք, երբ կդիտեր շուրջը, տեղ մը գտնելու համար, նո՛ւյն անկյունը, նո՛ւյն սեղանին առջև գտաւ Վաշեն, թերթերու տրցակ մը սեղանին վրա, և հատ մըն ալ ձեռքը։

Նախ շվարում մը կգայ, հետո դող մը, սարսուռ մը և ինքզինք գտաւ Վաշեի աթոռին քով։

— Բարև Վաշե, աթոռին վրայեն ոտքդ կքաշե՞ս։ Կանձրևեր, չկրցա տուն երթալ։ Թեյ մը առնել կուզեմ։

Ալիսի ձայնին շեշտը այնքա՞ն անմիջական էր, այնքան մեղմ, որ ամենօրյա հանդիպումներու և խոսակցութիւններու մտերմութեամբ էր թաթաւուն կարծես։ Կխոսեր իր հին, փաղաքուշ շեշտով, կարծես թե Վաշեի և իր միջև ոչ մի հեռաւորութիւն չըլլար, կարծես թե...

Բայց Վաչե այնպե՞ս ապշած ու սառն նայեցավ Ալիսի, այնպես անտարբեր, որ նոր միայն ան անդրադարձավ, որ անախորժ օտարություն մը գոյություն ուներ երկուքին միջև։ Ուզեց դառնալ կրունկին վրա ու հեռանալ, բայց նայվածքը հանդիպեցավ անթացուպերուն, որոնք կկռթնեին Վաչեի աթոռին, և անմիջապես շվարումը, վիրավորված ինքնասիրությունը, սիրտ ամբողջ վրդովմունքը հալեցան դուքի տանջող ու տրխրապին զգացումի մը մեջ։

Վաչե քաշեց դիմացի աթոռին վրա երկարած ոտքը, մինչ տաբատին մյուս մասը թույլ կերպով կկախվեր ծունկն ի վար...

Խորունկ, արամաթափալ լռություն մը տիրեց։ Ալիս փնտրեց բառեր, խոսքեր գորա՞մկն։ օր մտքին մեջ կպատրաստեր... Չգտա՞վ...

Նայեցավ Վաչեի, անոր երկայն թարթիչներուն՝ աչքերուն վրա ձգած շուքին։ Վաչե շարունակեց կարդալ ձեռքի թերթը։ Ալիս կնկան մը պատկերը տեսավ թերթին վրա և տակը հայերեն անուն մը կարդաց.

— Վաչե, ըսավ, ձեռքի թերթդ կուտա՞ս։ Ո՞վ է այդ կինը։

Ալիս կուզեր խոսակցություն մը սկսիլ, իսկ Վաչե չար շեշտով մը՝

— Քեզ չի հետաքրքրեր,— ըսավ,— սինեմայի արտիստ գեղեցկուհիներեն չէ։ Ի՞նչ պետք ունիս դիտնալու սովետական հերոս կիներու մասին, երբ դուն...

— Վաչե՞...

Ալիս ուզեց ափերովը փակել անոր բերանը։ Ինչու՞ այդ ձևով կխոսեր ան։ Որքա՞ն հեղաշրջված էր անոր կարծիքը իր նկատմամբ։ Ավելի լավ էր հին ա-

նուշեղենի խանութը փուլ դար գլխուն, քան թե Վաչեի այդ կծու ու խայթող բառերը այդպես ծանր ու թունալից իջնեին իր սրտին...

Վաչե անողոք անտարբերությամբ նայեցավ Ալիսին, հետո նորեն նայվածքը հակեցավ թերթին վրա։

— Վաչե՞,— հծծեց Ալիս,— դուն սխալ բաներ ես լսեր իմ մասին։ Ես նույն աղջիկն եմ, բնա՞վ չեմ փոխված։ Ինծի տուր այդ թերթը։ Ինծի տուր նաև ուրիշ գրքեր ու թերթեր, որ կխոսին մեր հերոսներուն և հերոսուհիներուն մասին, մեր Հայրենիքին մասին։

Լռեց։ Վերցուց թերթը։ Ձեռքերը, ծունկերը, ամբողջ մարմինը կդողար։

—Վաչե՞,— ձայնը այնքա՞ն խեղդված էր, այնքա՞ն անլսելի,— ես այնքա՞ն ուզեր եմ քեզի հանդիպիլ, քեզ տեսնել, ըսելու համար, որ ես նույնն եմ, նույնը՝ դեպի քեզ, դեպի իմ գաղափարները ու Հայրենիքս... Վաչե, այդ մյուս մարդիկը ես կատեմ, անոնց հետ ես ոչ մեկ գործ չունիմ, ոչ մեկ գործ... ես զզվանքով եմ հեռացեր անոնցմե... անոնք այնքա՞ն փոքր են, այնքա՞ն...

Թևին տակեն ձեռքի պայուսակը ինկավ գետին։ Այլայլած ծռեցավ, վերցուց, և առանց ուրիշ ոեէ բառ կարենալ ըսելու, Վաչեի նայվածքին արհամարհանքին տակ ճղմված, պզտիկցած, դողդոջուն, դուրս ելավ, հուղումը աչքերուն մեջ հեղեղվելե առաջ։

Անձրևը կմաղվեր բարակ...։ Մարդիկ կզարնվեին իրարու ու կքալեին արագ, դրեթե վազելով։ Հանրակառքերը միշտ խռնված, կսուլեին տաղտկալիորեն։ Իսկ Ալիս կքալեր դանդաղ, ձեռքը թերթը բռնած։ Դեմքին զարնվող մաղերը ցանուցիր աչքին մեջ թափող հովին հետ, իրեն կհասներ արձագանք մը...

— Կայլասերիս Ալի՜ս... կմոռնաս շատ մը բաներ, շատ մը կարևոր բաներ...

Հետո՝

— Ի՞նչ պետք ունիս գիտենալու սովետական հերոսուհիներու մասին, երբ դուն...

Վաչե մեկ ոտք ուներ, միմիայն մեկ ոտք։ Ալիս կկարծեր զայն գտնել ընկճված, կարոտ սիրո և խրախուսանքի։ Սակայն ոտքը կորսնցնելեն քանի մը շաբաթ վերջ, Վաչե արդեն սկսած էր վերագտնել իր նախկին կորովը։ Հայրենիքեն հասնող հաղթանակի լուրեր, Օտեսայի, Խարքովի և զանազան քաղաքներու վերագրավումը, հայրենի բանաստեղծներու մերթ ոգեմաշունչ, մերթ քնքուշ, բայց միշտ կենսունակ ու լավատես երգերը լեցուցին իր հոգին...

Ի՞նչ կարևոր էր ոտք մը։ Հոն, հեռո՜ն, ռազմաճակատին վրա, իր հայրենիքի բազմաթիվ եղբայրները կկորսնցնեն իրենց ոտքը, ձեռքը, աչքերը, ֆաշիզմի դեմ մղվող անագորույն պայքարին մեջ։ Բայց այդ բոլոր հաշմանդամները չէին կորսնցներ այն՝ ինչ որ ամենեն կարևորն էր. իրենց վառ հավատքը հաղթանակին մասին, մարդկութեան ապագա երջանկութեան մասին։ Ինք, թեև մեկ ոտքով, պետք է անշեջ պահեր կրակը իր հոգիին։ Պետք է տար կյանքին, մարդոց, հայրենիքին, ինչ որ կրնար, լավագույնը իր ունեցածին։

Եվ Վաչե փարեցավ կյանքին ուժգնորեն...

Ալիս քալեց դանդաղ, մեղմորեն մաղվող անձրևին տակ։ Քալեց ձեռքերը անձրևանոցին գրպանին մեջ՝ նվաղկոտ քայլերով։ Անցավ գործատեղին։ Չմտավ ներս։ Կոթնեցավ էլեկտրական սյունի մը։ Արցունքնե-

րու թաց շղարշին մեջեն նայեցավ թաց, գրեթե պա-
տրուվելու մոտ թերթին։ Հետզհետե մեծցավ հերոսու-
հիին պատկերը...։

Երկար ատեն դիտեց զայն անշարժ, անքթիթ,
ոնթափանց նայվածքով մը։

Ի՞նչ էր ըրեր ինք այս վերջին տարվան ընթաց-
քին...

Գրքեր կային սեղանին վրա, բազմաթիվ գրքեր,
փոշոտած, չկարդացված։ Սենյակին մեջ ատոին ու ան-
գին նետված կմնային իրեն հասնող թերթերը, առանց
բացվելու...։

Ծալլեց թերթը ու դրավ գրպանը դողդղացող
մատներով։ Հետո ժպտեցավ տխրորեն ու քալեց։
Այնքա՞ն գործ կար ընելիք...։ Տարիներու կորուստը
կարևոր չէր, կարևորը վերսկսելու ուժն էր հիմա։

Նորեն հիշեց Վաչեի արհամարհոտ նայվածքը։

Այդ նայվածքին մեջեն տարօրինակ ուժ մը փո-
խանցվեցավ իրեն։ Վաչե՞ն...։ Ալիս պիտի ջանար
վերականգնել Վաչեի նախկին կարծիքն ու հավատքը
իր մասին։

Կրկին ժպտեցավ։ Ճակատին վրա թափած մազերը
հավաքեց, ու քալեց հաստատաքայլ, նայվածքը պայ-
ծառացած հերոսուհիներու տեսիլքով...։ Իր մեջ զգաց
վերատին այն խանդավառությունը, որ ուներ Վաչեի
հետ աշխատած միջոցին։ Ի՞նչ լավ է, որ այդ օր հան-
դիպեր էր անոր։ Վաչե հավատքի ուժը ուներ։ Ան ու-
ներ պողպատյա ջիղերով գաղափարական մը...

Ալիս շարունակեց սիրել Վաչեն։

Ոտք մը բնա՞վ կարևոր չէր։

14—5—1944
Բեյրութ

ԺԱՄԱՆԱԿԸ ԿՈՆԳԻ

Այդ օր արևածագեն մինչև մայրամուտ, պզտիկ կողով մը արմուկին, ու երկար եղեգ մը ձեռքին՝ Մարիա կշրջեր գյուղեն բավական հեռու գտնվող ձիթենիստանի մը մեջ։ Կանգ կառներ ձիթենիի մը տակ, եղեգին ծայրովը դետին կձգեր այն քանի մը ձիթատպուղի հատիկները, որ պատահմամբ մնացեր էին ճյուղերուն վրա, կքեր դանդա՛ղ, ձեռքի փլած շարժումներով կհավաքեր զանոնք կողովին մեջ, կմնար պահ մը ծալլապատիկ, սև հագուստին կրկնապես կարկտված փեշերովը կսրբեր քիթըն ու աչքերը, քիչ վերջ կշտկվեր կարծես ակամա, կարծես մեծ ճիգով, ու ծակծկած և խոնավ տրեխներուն ամբողջ ծանրությունը կքաշքշեր թաց դետնին վրայեն, դեպի մյուս ձիթենին։

Շուրջը, ամպամած աշնանային երկինքի մը տակ ամայի ցրտություն մը կծավալեր։ Գյուղացիներ արդեն շաբաթ մը առաջվընե թոթվեր էին իրենց ձիթենիները։ Սրբեմն միայն, պարկերով բերցված էշ մը առջևը ձգած, դավազան մը երկու ուսերուն հորիզոնական, գյուղացի մը կանցներ վարի նեղ արահետեն, «բարև Մարիա», կըսդոռար ու կանհետանար զառիվայրն ի վար, իր լայն շալվարի ճոճումներուն հետ։

Մարիա չէր պատասխաներ։ Չլսելու կդարներ անոնց բարևը։ Կուզեր պահվտիլ անոնց աչքերեն։ Թող

չտեսնեին զինքը այդպես կողով մը ձեռքին՝ այդ ամայի ձիթեստաններուն մեջ... Թող չտեսնեին... Կը-սբրտնեղեր, ջիղերը կպրկվեին զայրույթով ու կթուլանային խորո՜ւնկ, խորունկ «ա՜խ» ի մը մեջ։ Է՜հ, ատենոք ինքն ալ պարտեզ ու ձիթեստան ուներ։ Ատենոք աչքերը բռնած տարածությամբ սա բոլոր ձիթենիները իրն էին։ Ու այսպես, անցյալին վերհիշումովը պառնացած՝ շրթունքները կշարժեին.

— Կուրանա՛ք, սատկի՛ք, որդնոտի՛ք։ Օրը չտեսնեք ուրիշներու քրտինքով հասակ նետած այս ծառերուն։ Թող ձեթը ըլլա թույն ու թունավորե ձեզ բոլորդ, ձեր զավակները, թոռները, փեսաները։ Յուրաքանչյուր հատիկի մեջ ամուսնուս քրտինքին բողոքը կա։ Քորնալիքներ...

Եվ այս անեծքը՝ անշուշտ այս ձիթեստանին ներկա տերերուն, մեծահարուստ Հաճի Բավլոյի ընտանիքի գլխուն...

Ծառերուն վրա հոս ու հոն խոշոր, կոտրտած ճյուղեր կմնային թառամած։ Պզտիկ վայրի ձիթենիներ կային փուշերու մեջ խեղդված, և կային տակավին ձիթենիի մինչև գետին հակած հաստ ճյուղեր նեցուկներու կարոտ։ Իսկ հողը քարացեր էր ձիթենիներու արմատին...

— Միայն դիզել, հավաքել, ճարպոտիլ դիտեք, կլոռար Մարիա բարկությամբ դողահար։ Ըսե՛ք, ըսե՛ք, մեր ատենը ասանկ ուժգո՞ւն, ասանկ թողլքվա՞ծ էին սա ծառերը...

Իրենց ատե՞նը...

Քսանհինգ տարի է, որ ամուսնացած էր Մարիա։ Ամուսնության առթիվ հայրը իրեն նվեր էր տված այդ

հողամասը քանի մը տասնյակ ձիթենիներով։ Անկե ի վեր ամեն տարի նոր տունկեր էին բերեր հոն, մինչև որ դաշտը լեցվեր էր այլևս։ Ամեն աշնանամուտին, հազիվ թե առաջին անձրևները տեղային, ինքն ու ամուսինը կճեղքեին ածուներ դաշտերուն մեջ ու կբանային լայն, խորունկ փոսեր ծառերու արմատին։ Անձրևը կը-լեցվեր, կլճանար հոն, ծառերը կցնծային թարմությամբ, կծլարձակեին և պտուղը կկախվեր ճյուղերեն՝ օրհնությամբ ծանրաբեռն...

— Ճակատին քրտինքը օրհնյալ է կնիկ,—կըսեր Նիքոլա գոհունակությամբ, երկար շիպտիքը բերանին, պեխին ծայրերը ոլորելով։

* * *

Գյուղը պզտիկ էր շատ, լեռան ու ծովուն միջև, ձորի մը մեջ փոսացած։ Ամռան, տուներու առջև բարձրացող թզենիներու վրա փոշին կդիզվեր հաստ հաստ ու աղբի բարկ հոտ մը կտարածվեր տուներեն ներս ու դուրս։ Ամեն տուն ուներ իր խողը և ամեն խող իր ճահիճե մահիճը։ Ամեն ամառ հիվանդությունը կսողսկեր տուներեն ներս ու կփտեր ծերերն ու երիտասարդները, բայց մանավանդ մանուկները։ Գյուղը չուներ բժիշկ, բայց ուներ շորս ուխտատեղի՝ շորս սուրբերու ջրաներկված նկարներով։ Մայրեր սուրբերուն կբերեին խուրձ մը իրենց հիվանդ զավկին մազերեն կամ կտոր մը անոր հագուստեն. կաղոթեին ծնրադիր, լալով, պաղատելով,

և սակայն ամեն տարի կմեռնեին բազմաթիվ մանուկներ...

Մեծ էր բարեսրտությունը Աստուծո և սուրբերուն։

Մեռնողին տեղ կծներ նոր մը...։ Գյուղացիին կուտար երկվեցյակ մը զավակ ու կառներ քանի մը հատը ետ...

Բայց Մարիա ուներ միայն մեկ զավակ։ Այցելեր էր գյուղին ու գավառին ամենեն զորավոր կարծված սուրբերուն, սակայն անոնք զլացեր էին երկրորդ մը իրեն։ Հետևաբար Վասիլին իր կյանքի խորհրդանիշն էր, աչքին բիբը։

Եվ պատահեցավ, որ տարի մըն ալ Վասիլի ինկավ հիվանդ։ Հայր ու մայր շվարեցան, խենթացան։ Մարիա լացավ, պաղատեցավ, ուխտեց սուրբերուն, իսկ Նիքոլա հայհոյեց բոլորին...։ Վասիլի մնաց միայն ոսկոր։ Ան մնաց միայն մորթ։ Դեղնեցավ աչքերուն ճերմակը նույնիսկ ու կապուտցան ծայրերը եղունգներուն...

Մարիա գրկեց զավակը, սեղմեց կուրծքին ուժգին, ուժգին, ուզեց պարպել անոր երակներուն մեջ իր ամբողջ արյունը։ Նայեցավ Հիսուսի պատկերին, որ կախված էր անոր սնարին վրա ու պոռաց կատղած ագահությամբ՝

— Չեմ տար, զավակս քեզի չեմ տար, պիտի չըտամ...

Հետո դարձավ Էրկանը տենդագին.

— Մախե որքան ձեթ որ ունինք։ Դիր ձիթենատանը գրավի ուսէ հարուստի քով և տա դրամ։ Քաղաք երթանք։ Երթանք բժիշկին...

Անզոր էին Սուրբերը։

Մինչև հիմա ո՞ր գյուղացին դրեր էր իր կալվածքը

գրավի և կլցնի ազատել զայն հետո...։ Առջևն էր Քիրիաքոյի և ուրիշ բազմաթիվ ընտանիքներու օրինակը։ Եվ սակայն պետք էր ապրեր Վասիլին։ Նիքոլա գլխահակ գնաց Հաճի Բավլոյին...

Վասիլի տարի մը մնաց քաղաքի հիվանդանոցը։ Այն տեսն ութը տարեկան էր։ Իսկ հիմա՞...

Մարիա փղձկեցավ մեկեն։ Ձեռքեն եղեգը նետեց մեկդի ու սկսավ լալ ողբաձայն, լացին տալով բառեր, բառերուն բանաստեղծությունն ու եղանակ։

Հիմա քսաներկու տարեկան ըլլալու էր... Բայց ու՞ր էր, ու՞ր, իր խեղճ Վասիլին։

Մարիա չէր գիտեր...։ Վեց տարին ի վեր ան հեռացեր էր գյուղեն.

— Կերթամ Հարավային Ամերիկա, ըսեր էր ան, կաշխատիմ հանքերու մեջ, և երբ բավականաչափ դրամ շահիմ, կուգամ ու կվճարեմ մեր պարտքերը, կազատեմ ձիթեստանը գրավե։ Այդ պարտքը ինծի համար գոյացավ,—ավելցուցեր էր ան ծանրորեն տխուր շեշտով մը,— ե՛ս կվճարեմ զայն...

Ու մեկներ էր հակառակ հոր կամքին, հակառակ մոր այդքա՞ն ուժեղ, այդքա՞ն զորեղ արցունքներուն... Մեկներ էր և ոչ մեկ լուր չէր գրկեր իր մասին։

Ա՞խ այդ պարտքը, որուն ճնշումին տակ կքեր էին Նիքոլայի երկաթակուռ ուսերը, ու ճերմկեր՝ մազերը Մարիայի։ Դյուրին չէր հանդիպիլ պարտատերին ազահ նայվածքին ու չկարենալ նայիլ խորը անոր աչքերուն շեշտակի...

— Կնիկ, այս պարտքը մոխիրի վրա պիտի նստեցնե՞ մեզ,— կըսեր Նիքոլա ամեն տարի պտղաքաղե հետը։—

Ոչ նոր շալվար կարել կուտանք, ոչ նոր հագուստ ու սը-
բեխ։ Կարկատան կարկատանի վրա կհագնինք, շահածնիս
պարտքի կուտանք, հանած ձեթերնիս պարտքի կու-
տանք, բայց չի հատնիր... Ամեն տարի կշատնա կնիկ,
կշատնա՞...

— Մա՛րդ, անոնց հաշիվին մի՛ վատահիր... տվածդ
մատներուդ վրա մեկիկ, մեկիկ հաշվե, իսկ չկրցածդ ակ
դյուղին ուսուցչին ընել տուր։ Անոնք մարդ չեն, խիղճ
չունին, Նիքոլա...

Տոկոսին, տոկոսին տոկոսը հաշվել դյուղին վար-
ժապետն ալ չէր դիտեր սակայն...

Օր մըն ալ, երկու տարի առաջ, Հաճի Բավլո օրի-
նական տերը դարձավ Նիքոլայի ձիթեստաններուն։
Պարտքը ավելի էր կարվածին արժեքեն...

Թե ինչպե՞ս...

Ասիկա տոկոսին, տոկոսին տոկոսը դիտեր...

Ո՜հ, այդ զաղրելի օրը...

Մարիայի կոկորդը փշոտեցավ կրկին...

Անիրավ էք, դող, ավազակ, բոլորդ, բոլորդ, Հաճի
Բավլոյեն մինչև օրենսդիր դատավոր ու դատարան։
Այդ ձիթեստանները իմս են, իմ քրտինքներս, իմ ա-
յրումս, իմ բազուկներս։ Ես վճարեցի ավելիով, ավելիով,
ավելիով... Դող էք, դո՛ղ, դո՛ղ,— պոռացեր էր Նիքոլա
դաղափած...։

Հետո խոյացեր էր ներս, սնտուկին գաղտնի մեկ
անկյունեն խլեր ատրճանակը ու կրակեր Հաճի Բավլոյի
վրա։

— Կատակեցնեմ ձեզ բոլորդ ու ձեզի ցույց կուտամ
օրենք ու արդարություն,— գոռացեր էր ան...

Ինկեր էր Հաճի Բավլո սրճարանի դռան առջև և
Նիքոլա բարձրացեր՝ կախաղան...

Անկե ի վեր Մարիա կապրեր գյուղի գյուղ ուրիշներուն ձիթապտուղներուն մնացորդները, ցորենի հասկերուն թափթփուքները հավաքելով։

* * *

— Մարիա՞,— ձայնեց մեկը։

Շուրջը նայեցավ։ Քիրյաքոն Էշերով գյուղ կվերադառնար։

— Մարիա՞,— կրկնեց ան,— պիտի անձրևե, չե՞ս տեսներ, արդեն կկաթկթի։ Եկուր նստե էշուն, Համփան անձրևի կբռնվիս, արդեն մութ է...։

Մարիա շարկեց կողովը, որուն մեջ հապիվ քանի մը ափ ձիթապտուղ էր կրցեր հավաքել ամբողջ օր...

Ամբողջ Համփան չխոսեցան։ Երբ Մարիա իջավ Էշեն խրճիթին դռան առջև, Քիրյաքո նայեցավ անոր տատապած գոյությանն ու շշնջաց կամաց...

— Մարիա՞, համբերե՛, վաղը մյուս օր կուգա Վասիլիդ... կառնես հարս, նոր տուն, նոր բույն կշինես...։ Միայն քեզի ու ինծի չէ, որ ըրին այս անիրավությունը, շատե՞ր կտառապին մեզի պես... ամբողջ գյուղը կհեծե պարտքի տակ։ Համբերե Մարիա՞, կփոխենք կյանքը գյուղին։ Անոնք կառնեն իրենց դասը... կուգա ժամանակը։

Մարիա գոցեց տնակին դուռը։ Խոնավ ու ցուրտ էր ներսը։ Սենյակին մեկ անկյունեն գերանները կախվեր էին։ Անձրևը կաթկթեր էր ներս ու ցեխոտեր սենյակին հողե հատակը։ Գետինը խսիրի մը վրա նստված

վերմակին մաշած ծակտիկներեն դեղնատած բամբակը ծվեն ծվեն կթափեր դուրս...

Ան փորձեց թաց բուխերիկին մեջ, թաց ցախերով կրակ վառել։ Ջարկավ քանի մը լուցկի մինչև որ դատարկվեցավ տուփը։

Գյուղին զանգակը կհնչեր, հատիկ հատիկ ցուրտ ու միապաղաղ տարածության մեջ։ Մարիա նայեցավ Վասիլիի պատկերին ու խաչակնքեց...

Դուռը զարնվեցավ քանի մը անգամ...

Հարուստ դրացիներեն մեկուն ոզտիկը կեցեր էր դռան առջև, ամոն մը ձեռքին։

— Մամաս զրկեց, Խրիստոսի անուն Վազը ասն է, մամաս մատաղ մորթեց...

Մարիա տաւալ ամանը տղուն ձեռքեն հանդարտ, ու մեկեն, ձեռքի արագ և ուժեղ շարժումով մը զայն նետեց դուրս։ Ամանը զարնվեցավ դիմացի պատին ու ինկավ վար փշուր փշուր։ Հետո դեմքի ցավի կնճիռները տեղությամբ ուռդված՝ դուռը դոցեց ուժով տղուն երեսին...

Մութ էր սենյակը, ցուրտ ու խոնավ։

Անոթի էր ինք, հոգնած ու մատած...

Գյուղին կոչնակը կհնչեր երկար, միօրինակ։

Մարիա կեցեր էր անշարժ դռան ետև ու աչքերը տղուն պատկերին հառած՝ կշշնջար,— Վասիլին կուգա... Կիսիենք կյանքը գյուղին։

Մառները ծալլվեր էին ամիսն մեջ ու կապմեր՝ բռունցք։

Ժամանակը կուգա...

1—5—1945
Կիպրոս

ԱՆՄԹԻ ԷՐ...

Դեկտեմբերի կարճ օրերը կրկնապես կարճցեր էին այդ օր՝ սև երկնքի մը և սեղատարափ անձրևներու մութ անդրադարձումով։

Էլենի աճապարեց տուն հասնիլ մինչև առաջ, բայց ստիպվեցավ կանգ առնել յուրաքանչյուր պատշգամի և քիվի տակ՝ անձրևեն պատսպարելու համար հին ու կարկտնված միակ վերարկուն, և մարմինը, որ այնքան փխրուն էր դարձած անոթության ճանկերուն մեջ։

Անձրևը դադրեցավ վերջապես և ինք մտավ իր տան անշուք փողոցին մեջ։ Ոչ ոքի հանդիպեցավ։ Իր մրջված ու ցավող քայլերուն կընկերանար նվազկոտ հով մը ու մթություն մը տանջող։

Տան բակին թանձր ցեխին մեջ խրեցավ քանի մը անգամ, քանի մը անգամ սահեցավ ու ինկավ ծնկաչոք, մինչև որ հասավ սենյակին դուռն առջև, հոգնա՞ծ, սառած, ցեխոտած ու նվաղուն...։

Հրեց սենյակին դուռը կամայ։ Ձեռքի ղդուշավոր շոշափումներով գտավ լուցկիի տուփը։ Լապտերին լույսին հետ, նայվացքը դնաց իր հնգամյա սղուն՝ Սոդիրիին, որ գետնի պաղ խսիրին վրա քնացած էր կոշիկները ոտքին, ծունկերը փորին վրա ծալված ու ձեռքերն ալ կուրծքին։

Առաջին գորավոր մղումը եղավ ծածկել պզտիկը,

բայց ձեռքերը չշարժեցան... ու ոտքերը մնացին- հոն ուր որ էին։ Հապա՞ եթե արթննար և իր անոթությունը պոռար... Գիտեր որ տան մեջ ոչինչ կար ուտելիք։ Ամուսն կերեր հատցուցեր էին խնայողության վերջին լուման։ Շաբաթն մը ի վեր անգործ էր ու ամեն օր քիչ մը, բայց այդ օրվան թափառումներեն Լոք մանավանդ, բոլորովին վեստրաեր էին գործ մը գտնելու իր վերջին հիվանդ հույսերն իսկ։

Հաջորդ օրվան անոթության մղձավանջը սկսավ մրճահարել ուղեղը։ Էլենիի գլուխը փլավ մեկեն բազուկներուն վրա ու սեղանին։ Ծայր տվավ հուզումի գանդաղ մակընթացություն մը, արցունքներու հատիկ հատիկ, համեցող հաջորդականությամբ։ Դամբանական թափորի մը կապար ու պղտիկ քայլերով անհայտացավ այդ օրը՝ եռեռն քաշելով դառնությամբ ու թշվառությամբ ծանրաբեռն կարավանը անցնող հինգ՝ Սոդիրիով սկսող, անով առանցքավորված և անով շրջանակված տարիներուն։ Եվ մտածումի սովորական իր հանկերգը այս անգամ ալ, մտքի բարդ կնճիռներուն ընդմեջեն կարեց իր ճամփան։ Ինչո՞ւ, ինչո՞ւ չէր սպաննած զայն ծնունդեն առաջ։ Կամ՝ ինչո՞ւ ծնունդեն անմիջապես վերջ չէր նետած նորածինը անծանոթ անկյուն մը, անծանոթ մարդոց դուռին։ Ինչո՞ւ ավեր էր անոր տառապանքը՝ անհայր ու անտեր, անոթի ու մերկ, անհաճույք ու անդպրոց մնծնալու...։ Ինչո՞ւ մանավանդ չէր խնայած պղտիկին ապօրինի գավակի սև արատը, զոր օր մը՝ իր դյուղի կալվածատերերեն մեկը դրեր էր անոր ճակատին, միայն ու միայն բռնի ու անասնային ուժով...։ Ինչո՞ւ...։

Էլենիի հայրը նոր մեռած էր այն տաեն, այդ կալվածատերին տանիքը դեռ փոխարարած միջոցին սան-

գուղեն իջնալով։ Եվ ինք, իբրև ամենեն տարեցը երեք եղբայրներուն ու շրջա քույրերուն, ստիպվեցավ աշխատիլ այդ կալվածատերին հողերուն վրա, հարը խաթրին համար, բարեսիրաբար իրեն հայթայթված սղաստեղիի պաշտոնին մեջ։ Աշխատեցավ երկու ամիս, մինչև որ սեթրի մը անմեղ զոհը եղավ։ Ուրացումը և կաշառքը փրկեց ամբաստանյալ կալվածատերը։ Էլենիի շուրջ հյուսվեցավ զրպարտություններու աղտոտ ցանց մը։ Ան ստիպվեցավ հեռանալ գյուղեն, ընտանիքին ու սիրելիներուն չփոխանցելու համար «անպատիվ» քրոջ մը տխրությունը, չվնասելու համար քույրերուն ապագային։ Գնաց քաղաք մը։ Իր գյուղեն մղոններով հեռու գտնվող քաղաք մը։ Եվ սակայն գյուղը մնաց իր էության մեջ, իբրև անբաժանելի մասը իր կյանքին։ Փնտրեց տնատուածածկ կանաչը անոր։ Փնտրեց ծովեզերյա բլուրի մը վրա բարձրացող երկու մեծ ու պզտիկ սենյակե բաղկացած իրենց տունը։ Ընտանիքին կարոտը մեծցա՞վ, մեծցա՞վ, լեռնացավ իր մեջ։ Մերթ երազեց թե մեռեր էր մայրը ու տեզկիտահը սենյակին անկյունը կմնար փոշոտած, եղբայրները անոթի էին ու մերկ, և կկանչեին զինք... կկանչեին զինք... Առատները արթնցավ գյուղ վերադառնալու անդիմադրելի փորձությամբ, բայց հիշեց նորեն անիրավությունը զոր կրեր էր, հալածանքը՝ որուն ենթարկվեր էր այդ հարուստ մարդուն նյութական ազդեցության տակ ճզճիմցած թզուկ անհատականությունների կողմե...։ Եվ սոսկում ու գարշանք խուժեցին կրկին արյունին մեջ։ Մնաց հեռու գյուղեն և անտեղյակ հոն թավալող կյանքին։ Ապրեցավ օտար այդ քաղաքին մեջ, խորթ ու առանձին։ Տառապանքը մեծցավ՝ ամեն օր քիչ մը և մեռցուց ամեն երազ իր մեջ։ Սակայն ոչ մեկ օր ան եղավ այնքան շարչարող, որքան այդ դիշեր՝

երբ անոթություն կար սենյակին մեջ, անոթություն՝ Սոդիրի քունին ու շունչին մեջ, անոթություն՝ սեղանին վրա, անոթություն բջիջներուն, մտածումին ու սրտին մեջ։ Եվ անգործություն... և անգործությո՞ւն...։

— Մա՛յր, ճշաց մեկեն ու սկսավ հեծկլտալ։ Ուզեց կծկվիլ անոր գրկին մեջ ճիշտ այնպես, ինչպես կըներ բոլոր այն մութ ու ցուրտ դիշերներուն, երբ մրրկաշունչ ալիքները կգոռոռամարտեին խարակներուն հետ ու կատրածեին իրենց սարսռազդեցիկ գոռումը մթնոլորտին մեջ։

— Մա՛յր, մա՛յր... Ինչո՞ւ ծնար զիս։ Ի՞նչ տեսա կյանքին։ Աշխատեցավ հայրս արևածագեն մինչև մայրամուտ, հոգնեցա՛վ, հյուծեցա՛վ։ Աշխատեցար դուն ալիվ և գիշեր տեղկիահիպ առջև, և մենք հագիվ ունեցանք մեր օրվան հացը միայն։ Ես, ամենեն տարեցը զավակներուդ՝ զացի զորոց երկու տարի, իսկ քույրերս ու եղբայրներս չգացին բնավ։ Մնացինք կիսամերկ և հագանք հարուստներու պատռտած, հինցած հագուստները։ Ինչո՞ւ ծնար զիս, և ինչո՞ւ ծնավ քեզ քու մայրդ։ Մինչ ինծի տարեկից աղջիկներ պահած են թարմությունն ու կարմիրը իրենց այտերուն, և ճաճանչը իրենց նայվածքին, ես ունիմ կանխահաս ծերություն երակներուս մեջ։ Մինչ անոնք երազ ունին և սեր ու ժպիտ, ես ունիմ արցունք, անոթություն ու հալածանք։ Ի՞նչ պիտի ընեմ վաղը մայր, ըսե՛... ըսե՛...

— Եթե ծախեմ ես զիս, պիտի դանվին բազմաթիվ գնողներ, եթե մուրամ, պիտի նետեն կտոր մը հաց կողովիս մեջ, բայց ես կուզեմ ծախել աշխատանքս և ոչ ոք կուզե գնել զայն...։ Մա՛յր, չեմ ուզեր ապրիլ, ինչո՞ւ, ինչո՞ւ ապրիլ՝ ա՛լ։

Հետո ինկավ գետնի խսիրին վրա ու քնացավ խորունկ, հոգնութենեն ու հուզումեն սպառած։ Քնացավ

ավելի մահվան գրկին մեջ քան Յեն կյանքին։ Եվ միակ մաղթանքն էր անշուշտ աչքերը գոցած ատենը՝ չարթընտալ այլևս բնա՜վ։ Վաղն որ պիտի գար, ավելի ահռելի էր քան երեկը, և իր դողդղացող, ոսկայլուկ մարմինը, անարյուն ձեռքերը և անեռապ հոգին, զայն դիմագրավելու կորովը չունեին ա՛լ, չունե՞ն...

Միայն եթե իրեն տրվեր հույսը՝ թե արևը որ կծագեր, իրեն համար ալ ճառագայթ մ'ուներ պահած, թե կանաչ ու զվարթ անտառներու մեջ, փարթամ ու մեծագիր սինեմաներն և ուրախության վայրերն, և մանավանդ ատումնական շենքերն նեյս ինքն ալ իրավունք պիտի ունենար մոնելու օր մը, և եթե ոչ ինք գոնե Սոդիրին, այն ատեն, այո՛, այն ատեն, անոր արյունը պիտի տաքնար պայքարելու, շընկրկելու կորովով։ Բայց ան ծներ էր ազքատ, ապրեր էր թշվառ ու անհաճույք կյանք մը և չուներ լավագույն կյանքի ո՛չ մեկ հեռանկար։ Հետևաբար ինչո՞ւ ապրեր, ինչո՞ւ... ինչո՞ւ։

Անձրևախառն հով մը կբախեր սենյակին փտած փեղկերուն և կաուրար փողոցներուն մեջ սանձարձակ։ Կատու մը կմլավեր դուրսը երկա՜ր ու անախորժ։ Սոդիրի մերթ ընդ մերթ քանի մը կտրատված բառեր կպոռար և կքնանար կրկին խորունկ։

Էլենի արթնցավ հանկարծ։ Խորհեցավ նույնիսկ թե բնավ չէր քնացած։

Անոթի էր, գործ կուզեր... Կըլլար ազբահավաք, ավելածու կամ լվացարարուհի, փույթ չէ, միայն թե ունենար հաց, հաց, հաց։ Ուրկե՞ գործ գտներ, ուրկե՞...։ Եվ խորհիլ, որ ինք չէր հավատար ատենոք թե մարդիկ կրնային իսկապես գործ չունենալ և մնալ անոթի։ Այո՛, ատենո՛ք...

Հիշեց։

Գյուղեն նոր եկած էր այն ատեն։ Սիգարետի գործարանի մը մեջ կաշխատեր։ Երկուշաբթի օր մըն էր, կեսօրվան մոտ։ Փողոցին մեջ իրարանցում մը փրթավ։ Գլուխներ պատուհանեն դուրս հակեցան։ Տողանցք մը կկատարվեր։ Լուռ տողանցք մը։ Թափորին մեջ կային ծերեր՝ կքած մեջքերով, երիտասարդներ՝ հուժկու բազուկներով, մայրեր պզտիկներու ձեռքեն բռնած, պատանիներ՝ ժժգույն ու ամոթխած, աղջիկներ՝ դեռափթիթ ու դալկահար, և մանուկներ բոպիկ ոտքերով։ Բոլորն ալ կքալեին լուռ, դանդաղ, մեռելատիպ լրջությամբ։ Բոլորն ալ իրենց կուրծքին ունեին պզտիկ ցուցատախտակներ, նույն ու նման վերտառությամբ.

«Անոթի ենք»

«Գործ կուզենք»։

Եվ մանուկներ՝ որոնք ունեին պզտիկ, ճերմակ դրոշակներ ձեռքերնին.

«Կուզենք հաց»։

«Կուզենք երթալ դպրոց»

«Մեր ծնողները գործ չունին»

«Անոթի ենք»։

Սողիրիին չատ պզտիկ մանուկներ։

Ու կքալեին անոնք, այդ ցուցարարները, դանդաղ, բայց հաստատաքայլ, դեմքերնին վճռականությամբ պրկված։ Բարձրադիր տուներու պատուհաններեն մարդիկ կտուլեին, ուրիշներ կծիծաղեին լիահագագ, իսկ գործարանին մեջ շատեր կայպանեին ցուցարարները, խումբը այդ խելագարներու։

Ի՞նչ եղան անոնք վերջը, խորհեցավ Էլենի։ Գտա՞ն գործ, թե մեռան անոթի։ Անոնց թիվը հազարի կհասներ։ Ինչպե՞ս հավաքվեր էին իրարու քով։

Քամին ցնցեց հողե տնակը ուժով, ու սողոսկեցավ սենյակեն ներս դռան ճեղքեն ու տակեն։ Էլենի կծկվեցավ պլանքեթին տակ։

Երեքհարյուր հոգի կաշխատեին սիգարետի գործարանին մեջ։ Այդ օր հանդիպեր էր անոնցմե չորսին։ Անոնք ալ տակավին անգործ էին իրեն պես։ Շաբաթե մը ի վեր գոցված էր գործարանը։ Իսկ մյուսնե՞րը։ Ի՞նչ կընեին անոնք։

Քիվի ծայրերեն անձրևը կիյնար հատիկ հատիկ...

Այո՛, ի՞նչ կընեին մյուս գործակիցները։

Վաղը առտու կանուխ, Էլենի պիտի երթար տեսներ զանոնք։ Պիտի ըներ ինչ որ անոնք կընեին, կամ կուզեին ընել։ Երեքհարյուր հոգի էին։ Սոդիրին ալ հետը պիտի տաներ։

Աչքերը գոցեց և ապասեց։ Չկրցավ քնանալ...։ Ե՞րբ առտու պիտի ըլլար։ Հույս մը՝ թեև ճղճիմ, թեև դյուրաթեք, նետեց արմատ արյունին մեջ։

Առանձին չէր։ Առտուն կանուխ պիտի երթար ու գտներ մյուսները։ Այո՛, անպայման պիտի երթար։

Գոցեց աչքերը կրկին։

Ցուցարարները կտրղանցեին լուռ ու դանդաղ։ Մարդիկ կտուրեին պատուհաններեն և կծիծաղեին լիաշունչ։ Բայց անոնք կբարևին վճռակամ ու հաստատակամ։ Անոթի էին...

Էլենին ալ անոթի էր։

Մութ էր դուրսը։ Առավոտը ինչո՞ւ կուշանար...

Հոմը կտուրա՞ր տանձարձակ...

3 Նոյեմբեր, 1945
Բեյրութ.

ԱՆ ԹՈՂ ԳԱ

Քանի մը օրե իվեր Սիրվարդի գիշերապահության հերթն էր հիվանդանոցին մեջ։

Յուրա շաբաթ գիշեր մնը էր։ Հիվանդներեն շատեր այդ օր տուն գացեր էին, իսկ մնացյալները կքնանային խորո՜ւնկ, մեղմորեն մտալվող անձրևին օրորող հանկերդեն թմրած կարծես։

Սիրվարդ կրակարանին քով նստած, ջանաց կարդալ օրերե ի վեր սկսված գիրք մը, բայց շուտով քունով ծանրացած թարթիչները ու գլուխը դրավ սեղանին վրա։

Մեկեն՝ ամբողջ հիվանդանոցը լեցնող հեծկլտուք մը լսեց ու վազեց ձայնին ուղղությամբ։

Նրեսին վրա պառկած, Լուսիա կուլար կուրծքի ցավերին ելևէջներով։

Սիրվարդ բռնեց հիվանդին բազկերակը մտահոգությամբ։ Լուսիա սրտի հառաջացյալ հիվանդությամբ կտառապեր, ու կրնար վայրկյանի մը մեջ մեռնիլ։

Ան վերմակը քաշեց գլխուն ու պոռաց.

— Ջիս առանձին ձգեցեք, քովես գացեք։

Հետո շշնջաց ցա՜ծ, գրեթե անլսելի, հեծկլտուքներու մեջ կորսված ձայնով մը.

— Սի՜րտս, սի՜րտս, պիտի մեռնիմ...

Սիրվարդ վազեց հեռաձայնին քով։

Անձրևը սաստկացեր էր։ Կարկտախառն խոշոր

կաթիլներ կծեծեին պատուհանները։ Դուրսը փոթորիկ էր, փայլակ ու որոտում։ Հեռաձայնին մեջեն բժիշկին ձայնը կհասներ աղոտ, մարած, կտրատված։

Հիվանդին հեծկլտուքը դադրեր էր։ Արցունքի հոր-դառատ, խելահեղ վազքը քշեր տարեր էր կարծես ամեն ինչ, որ կար դիզված ու ճնշող Լուսիայի սրտին վրա։ Հանդարտեր էին անոր կուրծքի ելևէջները։ Հոգիին լվացված, մաքրված խողովակներեն արտասուքը կծորեր դանդաղ, տեղատարափ անձրևի մը հետ տանիքներու ծայրերեն մեկիկ մեկիկ ինկող հատակ կաթիլներու նման։

Սիրվարդ նստավ հիվանդին անկողնին վրա։ Ձեռքի մեղմ շոյանքով վերցուց մազերը անոր դեմքեն ու ճակտեն։ Թաշկինակի թեթև հպումով սրբեց Լուսիայի աչքերը և նայեցավ խորը անոնց՝ համառ ու տխրագին։

— Բժիշկը հիմա կուգա,— շշնջաց,— հիմա կհանգըստանաս։

Հիվանդին մարմինը փուշ փուշ եղավ։ Բացավ սև ու խոշոր փոսացած, դատարկ աչքերը Սիրվարդի վրա երկար պահ մը։ Հոգնած, կարծես հեռավոր աշխարհներե հև ի հև հասնող նայվածք մը դեգերեցավ Սիրվարդի դեմքին՝ կասկածով, վախով, որոնումով։ Մտավ ներս անոր հոգիեն, ելավ դուրս կրկին և փաթթվեցավ անոր շրթներուն ծայրը դծված, բարակ ու տրտում ժպիտին։ Երկարեց ձեռքը ջղային շարժումով մը, բռնեց ու սեղմեց Սիրվարդի մատները։ Հանկարծորեն փլավ Լուսիան շրջապատեն ու մարդերեն բաժնող պարիսպը... Խոսեցավ հիվանդը, ան՝ որուն երեք շաբթվան հիվանդանոցի կյանքը անբառ ու անխոս հատնում մը եղած էր։

— Գիտե՞ս ինչ,— ըսավ,— չեմ ուզեր, որ ամուսինս

վճարն հիվանդանոցի ծախսերս։ Չեմ ուզեր անոր դրամը։ Չե՛մ ուզեր...

Ունեցած քիչ մը արյունն ալ դուրս էր թափվեր երակներեն հուզումի ճամփով։ Հիմա դեմքը առեր էր դեղին դույնը մեռելներուն։

Սիրվարդ անհամբերությամբ նայեցավ դռան՝ բժշկին սպասելով։

Հիվանդանոցին լույսերը կվառեին ու կմարեին էլեկտրական հոսանքի խանգարումին հետևանքով։ Երկա՜ր պահ մը մթություն եղավ։ Լռաիա շարունակեց խոսիլ նվաղուն, հեռզհետե խեղդվող ձայնով մը։

— Լսեր եմ թե հիվանդանոցներ մեռած մարմիններ կգնեն, բժշկական ուսանողներուն անդամահատությամբ ցուցմունքներ կատարելու համար։ Նայե՜...։ Կուզեմ մարմինս ձեզի թողուլ հիվանդությանս ծախսերուն փոխարեն։ Ճե՜ք...։ Կատեմ դայն...

Բժիշկը հասավ աճապարանքով։ Մոմի տկար լույսով մը քննեց հիվանդին սիրտը։ Նայեցավ Սիրվարդին, տրտմորեն շարժեց գլուխը ու ելավ սենյակեն դուրս։

Մահավճիռը գրվեր էր արդեն անոր աչքերուն մեջ։

Հիվանդը ա՛լ չէր խոսեր, թուլցեր էին ձեռքերը Սիրվարդի ափերուն մեջ։ Սահմռկած նայվածք մը սառեր էր բաց աչքերուն խորը։

Վերջին անգամ շարժեցան շրթները.

— Բարձիս տակը,— կակազեց շնչահատ,— տետրակ մը... Անոր տուր...

— Որո՞ւն,— հարցուց Սիրվարդ հապճեպով,— ո՞վ է Ան...

— Անո՜ր...

Սիրվարդ քաշեց հիվանդին անկողինին շուրջի վարագույրները։ Շունչի մնացորդը արցունքի կաթիլի մը մեջ կախվեր էր Լուսիայի աչքերուն ծայրեն։

* * *

Ժամ մը վերջ, երբ տարեր էին հիվանդին մարմինը և հիվանդանոցը վերադառներ էր դիշերային իր բնականոն լռությունը, Սիրվարդ բացավ այդ պզտիկ տետրակը, զոր գտեր էր Լուսիայի բարձին տակեն։ Հիվանդին հուշատետրն էր այդ, ֆրանսերեն գրված.

«Հիվանդանոցին մեջ»

Սիրվարդ կարդայ լարված հետաքրքրությամբ.

Շաբաթ, 2 փետրվար

- Տաս օրն ի վեր հիվանդանոց փոխադրված եմ։ Հոս բոլորը գիս վայրենի արարած մը կնկատեն։ Կուզան, կխոսին, կկատակեն շուրջիս բոլոր հիվանդներուն հետ, հետո խոժոռ մը կնային ինծի ու կհեռանան իրարու բաներ մը փսփսալով ու խնդալով։

«Այս կինը խենթ մըն է» կխորհին թերևս։

Այո, խե՜նթ մը...

Ես ալ հիմա կխորհիմ։ Խենթ մը չէ՞ի մինթն, երբ գիշերներ շարունակ անքուն և արտասվախառն աչքերով մեծցուցի տառապանքը հոգիս, ընկճվեցա գիս շրջապատող դժվարություններուն տակ ու կրծեցի առողջությունս։ Ո՞վ է հանցավոր, երբ ամեն վայրկյան սիրտս կանգ առնելու մղձավանջեն բռնված է։ Ձե՞ք, ե՞ս, թե Ան...

Երեսունմեկ տարի լուռ ու աննշմար հատնում մը եղավ կյանքս։ Երկու տարեկանիս տարագրության ճամփաներուն մեջ որբացա։ Մեծցա մայրապետանոցի մը մեկուսացած, մահացած պատերուն մեջ, ուր միայն աղոթեցի ու երգեցի։ Փոքրյան ջիղերս, փտեցավ հոգիս։ Մայրապետներուն այդ կրավորական հանդարտ համակերպումը հիվանդացուց զիս։ Փախա վանքեն՝ բուժվելու համար կյանքով։

Բայց սի՜րտս, սի՜րտս...

Այստեղ կընդհատվեր այդ օրվա օրագիրը։ Հաջորդ օրերուն քանի մը տող միայն կար արձանագրված։ Դժգոհություններ բժիշկեն, որ անուշադրության էր մատներ դինք, հիվանդապահ քույրերեն, որոնք չէին պատասխաններ իր զանգի կանչերուն և զբաղված էին երիտասարդ հիվանդներու հետ կատակելով մյուս սենյակին մեջ։

Սիրվարդ դարձուց էջերը։

Երեքշաբթի, 12 փետրվար.

Դիշերը երազիս մեջ կոճակի գործարանը տեսա։ Առաջին մտած օրս էր։ Որքա՜ն լավ էր... Եվ այսօր ահա աչքիս առջևեն չի հեռանար Անոր պատկերը։ Չէ՞ որ առաջին իսկ օրեն Ան իմ ուշադրությունս էր գրավեր։

Չուներ առնական ուժեղ կազմը այր մարդոց, բայց երբ խոսեր, ներքին անհատնում զորություն մը կխուժեր բառերուն մեջ, ջղուտ, համատարած նայվածք մը կպայծուրեր հոգիները։ Երբ բազուկը բարձրանար օդին մեջ ու կոշտացած, սևցած մատները ծալլվեին ու կազմեին բռունցք, կզգայիր թե աշխարհ մը շինելու, կամ քանդելու չափ ուժ կար այդ բազուկին մեջ, և չէր իյնար ան, որ կվստահեր ատոր զորության։

Իր անձեն բխող այս հեղեղանման ուժն էր, որ զիս իրեն կապեց ու իրմով՝ կյանքին։ Գործարանին մեջ տարի մը ամբողջ կյանքս հղավ ժպիտ։ Ունեցա դժդոհություններ, ունեցա բողոք, ունեցա զայրույթ, բայց այս բոլորը միաձուլվեցան մյուս բոլոր գործավորներուն բողոքին հետ ու կազմեցին հավաքական ղորություն մը, որ գնաց ու ճնշեց բոլոր անոնք, որ կուզեին ճնշել մեզ, գնաց ու իջավ մեր գործատերերուն դլխուն։

Ամբողջ կյանքիս մեջեն այդ մեկ տարին կղատվի հիմա ու կժպտի ինծի հեռվեն, զվարթ ու գոհունակ։ Որքա՜ն երջանիկ էի այն ատեն, որքա՜ն զորավոր ու ինքնաբավ, անկախ։ Ունեի աշխատանք, ունեի և ձայն։ Իսկ շուրջս կար հորդող, ստեղծագործող կյանքին եռուզեռը...

Օր մըն ալ սակայն նվաղեցուցին մեր օրավարձքերին կրկին, ու մենք դիմեցինք ընդհանուր գործադուլի։ Չորս օր ետք բոլորս վերադարձանք գործի, բացի Անկե...։ Հետո լսեցինք, որ գործե դուրս նետեր էին զայն, որպես մեղ դրդռող մը։

Գեղեցիկ էի ես ու դեռատի։ Ատոր համար ալ հավանաբար, տարի մը ետք, մեր գործարանատիրոջ տըղան՝ ձեռք, ուզեց ամուսնանալ հետս։ Ամուսնությանս օրեն ի վեր հին ու նոր կյանքս խզվեցան իրարմե։ Այդ օրեն ի վեր գործարանի այդ իմ հին ու անկեղծ ընկերներուս նայվածքին մեջ արհամարհանք մը հասունցավ ինծի հանդեպ։ Եվ ամիսներ ետք, երբ օր մը հանրակառքին մեջ պատահմամբ հանդիպեցա Անոր, որ երկար բացակայութենե մը ետք նորեն այս քաղաքը վերադարձեր էր, Ան նայեցավ ինծի դատա՜րկ, անտարբեր նայվածքով մը... Ես ուզեցի մոտենալ անոր, ըսել այլևս

անօգուտ դարձած բաներ, ըսել թե սոսկալիորեն ձախող ամուսնութիւն մըն էր իմս։ Կիսափագեի այդ վայրկեանին իրեն բացատրել, որ ինք թեև աղքատ, թեև անգործ, բայց շատ ավելի բարձր էր իրրև մարդ ճեքեն, զեխութեան ու շռայլութեան մեջ այլասերած, անձնասեր ու անզգամ ամուսինես։ Այո, շարժում մը ըրի դեպի իրեն, բայց ան տեսավ մոտենալս և ցատկեց հանրակառքին վար։

Այդ օրեն ի վեր Անոր պատկերը շարունակ կհալածե զիս։ Անոր մասին կերազեմ, Անով կապրիմ։

Ճե՞քը...

Մինչև հիմա ալ չեմ հասկանար թե ո՞րն է այն կապը, որ զիս իրեն կկապե։ Պսակված ըլլալու իրողութիւնը, թե երեք զավակներու գոյութիւնը։ Բայց այս երկու տվյալները չե՞ին որ ստիպեցին զիս ապրիլ իրեն հետ, երբ կատեի զինք։ Թուլատրեցի, կրավորական վախկոտ համակերպումով մը, որ ան իր անսիրտ ճանկերուն մեջ առած՝ ճղմե ու մեռցնե սիրտ մը, այլասպես վիրավոր, սիրտ մը՝ իրը չեղավ բնավ, և չեղավ նա և իմս, այլ մնաց այդ Մյուսինը, հակառակ իմ բոլոր ճիգերուս ու պայքարիս։

Այո, շարունակեցի ապրիլ նույն հարկի տակ, երբ կատեի զինք, երբ ամեն զիշեր տուն կուգար կես զիշերեն վերջ միայն, զինեի բարկ հոտը բերանին և «քաղաքաբե»-ներու պարին ու խինդին մեղկութիւնը հագուստներուն վրա ու հոգիին մեջ։ Տարի անձայն իր արդուկված, մաքուր ու ճաշակավոր հագուստներուն տակ պահվտած զահեկացած հոգիին հայհոյանքը՝ ամեն անգամ երբ ան «ռոքեռ»-ներու սեղանին առջևեն տուն

եկամ պարուած, ու թափեց զայրույթն ու ցասումը իմ վրաս։

Անայինք միշտ օտար իրարու, մնայի միշտ արհամարհված մը իրմէ և իրենիններէն, քանի որ ան կուգար «սալոն» ներու ու պարասրահներու, ճոխութեան ու բիհեղներու կեանքէն, իսկ ես կուգայի սրբութեան, տառապանքի ու աշխատանքի շավիղներէն, գործարանի կեանքէն, պարզ ու համեստ հոգիով մարդոց մէջէն։

Զավակնե՞ր...

Յաւադին երկունքով մը զանոնք աշխարհին հանձնելը կբաւե՞, որ ես ըլլամ անոնց մայրը, երբ անոնք չճանչցան իմ հոգիս, չկապվեցան ինծի զդացումի այն ընքուշ կամուրջով, որ կշաղկապե երկու անձերն իրարու և անփլչելի է, անխորտակելի, ավելի քան բոլոր, բոլոր նիւթական կամուրջները աշխարհի։ Անոնք փոքր, շատ փոքր տարիքեն բաժնվեցան ինձմէ ստանալու համար «սալոն»-ի կեանքին վայել ընկերային դաստիարակութիւն մը, զոր ես «դած խաւարն ոերած կին» մը չէի կրնար ստանձնել։

Այսօր սիրտհատնումի սոսկալի նոպա մը ունեցա։ Ուզեցի զավակներս տեսնել, հոդ չէ թէ հեռվեն, պատուհանին ետևեն։ Ճնք խնդաց անփութորեն։ Զայրույթը եղաւ լորձունք բերանիս մէջ, դառնութիւնը եղաւ թուք շրթերուս վրա։ Կեանքիս վերջին օրերուն իսկ, ան կուզեր զավակներս զրկել զիս։ Ո՜հ, ես թքա այդ վատին երեսին։ Երանի՞ թէ մարիներ առաջ այդ ըմբոստացումը պոռթկալու քաջութիւնը ունենայի։ Հիմա չէի մեռներ այսքան երիտասարդ։ Այնքա՞ն թեթև կկգամ այսօր։ Տարիներու զերութեան կապանքները փշրված են։ Ապրե-

լու տենչ մը կտաքցնե մարմինս։ Կարծես թե Անոր քայլերուն ձայնը կլսեմ...

Անձրևը կմաղվի դանդաղ։ Սպասումը դեգերելե՛ լ հոգնած, կաթիլ մը արցունքի մեջ կխտանա աչքերուս վրան մեջ, ծաղկի բաժակի մը վրա հանգչող, առավան արևին սպասող ցողի կաթիլի մը նման։

Ինչո՞ւ չեմ ուզեր տեսնել վերջակետը, որ կեցկը է Անոր ու իմ մեջտեղս։ Ուրկե՞ շարունակելիները սիրելու հավիտենական այս մղումը իմ հոգիս։

Կուզեմ ապրիլ...

Թող գա Ան, ու ես վարիմ իր ճառագայթ բազուկին, ուժովնալու, չինալու, չմոռնելու համար։ Իրմով կապվելու համար կյանքին ու ստեղծագործ աշխատանքին և պայքարին։ Ան թող գա...

* * *

Սիրվարդ չէր վերջացուցած Լուսիայի հուշատետրին ընթերցումը, երբ բժիշկը մոտեցավ սեղանին ու լսավ քիչ մը դառնացած շեշտով.

— Ամուսնին հեռաձայնեցի։ Հաժարեցավ Լուսիայի մարմինը մեզի ծախել...

Բժիշկ ու հիվանդապահուհի վայրկյան մը նայեցան իրարու տխրորեն ու թեթևորեն շարժեցին իրենց գլուխները։

Սիրվարդի նայվածքը ինկավ բաց ձգված հուշատետրին վրա...

«Ան թող գա...»

5 Ապրիլ- 1946
Բեյրութ.

ԲԵՆՔ ՀԱՊԹԵՅԻՆՔ

Ուրախութենեն խուճապի մատնված մատներով, Հրաչուհի պատռեց նամակին պահարանը, առանց ուշադրություն դարձնելու, որ վրայի ձեռագիրը Հրայրինը չէր։ Նամակը բեյրութեն էր։ Արդեն այդքանը բավական էր, որ մտածումներն ու զգացումները շփոթվեին, իրար խառնվեին։ Բեյրութի մեջ Հրայրեն զատ ոչ մեկը ուներ։

Հրաչուհի հանգստացավ, երկար շունչ մը քաշեց և ապահ աչքերը ինկան ութը մեծադիր էջերու վրա տարածված նամակին։

Ուրեմն Հրայր զինք չէր մոռցած, անտեղի էին երկու ամսվան երկարատև լռության մը հետևանքով իր մեջ արթնցած կասկածները, մտահոգությունները։ Իզուր էին վերջին շաբաթներու ընթացքին թափած արցունքները։

Քանի մը տող կարդաց ու ապշած կանգ առավ։ Ի՞նչ ըսել կուզեին այդ տողերը...

«Սիրելի Հրաչուհի,

Քեզի գրելու շատ տխուր պարտականությունը ինծի է վիճակված։ Ամիս մը առաջ պետք է գրեի քեզի, բայց ես միշտ, ամեն օր, հետաձգեցի։ Չէի գիտեր ի՞նչ գրել, ինչպե՛ս գրել։ Դիտեի, որ ինծի համար գրելը որքան տաժանելի, քեզի համար գրվածը ընդունիլը նույնքան անհանդուրժելի ու ցնցող պիտի ըլլար...»

Թուղթը ձեռքերուն մեջ սկսավ դողալ։ Գիրերը իրար խառնվեցան։ Զարագուշակ լուրի մը դեմ հանդիման գտնվելու գիտակցությունը, կրկնապատկեց հետաքրքրությունը։ Թարթեց աչքերը։ Փնտրեց նամակին ընդհատված տեղը, և նոր միայն անդրադարձավ, որ ձեռագիրը թեև Հրայրինին շատ նման, բայց անորը չէր։ Տառերը ավելի փոքր ու ավելի հստակ էին։ Դարձուց ութերորդ էջը։ «Զոհրաբ»։

Զոհրա՞բ...

Հրայրին անբաժան, ամենեն մտերիմ ընկերն էր։

Սիրտը վախով կծկվեցավ։ Հրայրին փոխարեն իրեն կգրեր անոր ընկերը։ Կգրեր անհանդուրժելի, ցնցող բանի մը մասին։ Իսկ Հրայր երկու ամիսե իվեր լուռ էր...

* * *

Ուշ գիշերին, Հրաչուհի բազմոցին անկյունը նըստած, ափերուն մեջ կճզմեր դեղձան մազերուն մետաքսանման խոպոպիկները, որոնք ցրված էին լայն ու ցցուն ճակտին վրա։

Թախծոտ նայվածքը չէր հեռանար դաշնամուրին վրա դրված Հրայրին խոշոր նկարեն։ Հուզումեն կխածներ շրթունքները։

Հրա՞յրը...

Անոնք հանդիպեր էին իրարու շատ ուրախ օր մը, պարահանդեսի մը միջոցին։ Կարմիր Բանակը մտեր էր Բեռլին։ Հաղթանակի օրն էր։ Վերացեր էր պատերազմի

արհավիրքը։ Փողոցներուն մեջ ժողովուրդը խելահեղ խանդավառությամբ կարձագանքեր այդ մեծ լուրին։ Տուներու մեջ մարդիկ սեղան էին բացած և կխմեին ինկած հերոսներու հիշատակին։ Ամենեն ժլատ սիրտերն իսկ դարձեր էին հյուրընկալ։ Եկեր էր հաղթանակը։ Եկեր էր միլիոնավոր զոհերու, բազմաթիվ քաղաքներու ավերումներու գնով։

Փրկվեր էր մարդկության ապագան։

Հինգ տարի շարունակ, մահվան սպառնալիքին, ավերածություններու և արյունի սարսռազդեցիկ տպավորության տակ ջլատված մարդկային ջիղերը հանդըստացեր էին այդ օր։

Թմբուկին ձայնը ավելի զորավոր էր, մարդոց ծիծաղը՝ ավելի հարազատ ու անկեղծ։

Կյանքը հաղթեր էր մահվան։

Մարդիկ իրենց առօրյա փոքրիկ քեներն ու հակառակությունները մոռցած, երջանիկ կժպտեին իրարու։ Նույնիսկ այն քիչերը որոնք պատերազմի ամբողջ տևողության ընթացքին ֆաշիստներու կենացն էին խմեր, հիմա, հաղթանակի հանդիսավոր ու զինով այդ պահուն, ժողովրդին զայրույթեն խուսափելու համար, կխմեին Հաղթական բանակին ի պատիվ։

— Այդ քիչե՞ր...— հծծեցին Հրաչուհիի շրթները, և աչքերուն մեջ թախիծը կուտակվեցավ, փոխվեցավ դառնության, փոխվեցավ ատելության։

Հետո Հրայրի նկարին նայեցավ նորեն, և արցունքի կաթիլ մը կախվեցավ թարթիչներու ծայրեն...

Գերերջանիկ օրվան մը հետ էր կապված իրենց առաջին հանդիպումը...

— Հաղթանակին կհավատայի՞ք, հարցուցեր էր Հրայր պարելու ատեն, նայելով Հրաչուհիի խաժ աչքերուն մեջ։

— Ինչպե՞ս, միթե՞ կարելի էր կասկածել այդ մասին,— շշնջացեր էր Հրաչուհի, նվագի բարձրագոռ ձայնին մեջ հազիվ լսելի շշուկով մը։

Նայեր ու ժպտեր էին իրարու, և Հրայր ավելի ամուր էր բռներ Հրաչուհիի ձեռքեն։ Առաջին պարին հաջորդեր էր երկրորդը, երրորդը։ Մինչև առավոտ անոնք պարեր էին միմիայն իրարու հետ, և պարասրահեն մեկներ՝ նոր հանդիպումներու խոստումով։

Այդ օրվընե ետք, մեկ տարվա ընթացքին, փոքր ու մեծ շատ մը միջադեպերով հարստացեր ու խորացեր էր անոնց սերը։

Սկսեր էր տարիներով սպասված հայերու ներդաղթը դեպի Սովետական Հայաստան։ Եվ Հուլիսյան պայծառ օր մը, առաջին հայրենադարձ նավով, Հրաչուհի իր ծերունի հորը հետ մեկներ էր հայրենիք, այդտեղ, հայրենի տան մեջ, Հրայրին վերջնականապես միանալու երազներով...

Հրայր մնացեր էր Բեյրութ։ Դեռ քանի մը ամիս պետք է մնար այդտեղ։ Քաղաքին հառաջդիմական, ժողովրդին կողմե ամենեն շատ սիրված թերթերեն մեկուն խմբագիրն էր։

Հայրենադարձության այդ խանդավառ օրերուն, երբ հայրենասիրությունը կալեկոծեր դարերով տառապած հայ պանդուխտ ժողովրդին սիրտը, երբ հայրենադարձ նավեր կմեկնեին իրարու ետևե, ավելի քան

ոչէ ատեն սաստկացած էր դաշնակցական ղեկավարներու զայրույթը՝ հայրենիքի ու ներգաղթի դեմ։

Անզոր էին եղած ուրեմն ամբողջ քսանհինգ տարվան իրենց ջանքերը, հայը իր հայրենիքեն բաժանելու, հայրենիքե մը՝ որ ի հեճուկս իրենց, ժողովրդին համար ավելի սիրելի էր սոցիալիստական ըլլալուն համար։ Ժողովուրդը այլևս ձանձրացեր էր անհայրենիք ապրելե, ձանձրացեր՝ օտարներուն երկրպագելե, «աղա»-ներու առջև ստրկորեն գլուխ ծռելե։

Ժողովուրդը երջանկութենեն դինովցած էր։ Դաշնակցությունը ջղայնութենեն խելագարած։ Կկազմակերպվեին դիշերային հարձակումներ ներգաղթի համար արձանագրված ընտանիքներու տներուն վրա, կհետապնդվեին հայրենասեր մարդիկ...

Հրայր մնացեր էր հեռավոր այդ քաղաքին մեջ, իր թերթին, իր պաշտոնին գլուխը։ Ի՞նչ փույթ, որ մութ ուժեր կծեծեին թերթին ցրվիչը կամ կպատռեին թերթերը։ Ժողովուրդը ձեռքե ձեռք, հև ի հև կհետևեր անոնց դավադրությունները մերկացնող, Հրայրի բոցաշունչ խմբագրականներուն։

Ինչո՞ւ անոնք դեմ էին ներգաղթին։ Ինչո՞ւ կուզեին ժողովրդին հայացքը հեռացնել Արագածի փեշերուն փռված իր հայրենիքեն, ուր ամեն մարդ տերն էր իր ճակատագրին, և երջանիկ՝ իր բախտով։ Ինչո՞ւ...

Արթնցած էր ժողովուրդը և գիտակցած՝ որ իր միակ փրկությունը ներգաղթի մեջ է։ Հայրենադարձության դեմ ուղղված կատաղի լոտանքներուն մեջեն, ան կլսեր օտար, հետադիմական խմբակներու ձայնին արձագանքը...

— Հրաչուհի՜...

Հորը ձայնը լսվեցավ դուրսեն։

Դուռը բացվեցավ։

— Հրաչուհի՜, ինչո՞ւ նրբանցքի լույսը չես վառած։ Սանդուղքներուն վրա այնքան մութ էր։ Քիչ մնաց իյնայի...

Հրաչուհի հիշեց, որ ճաշն ալ չէր տաքցուցեր հորը համար։ Ան հոգնած և անոթի էր։

Տեղեն չշարժեցավ։

Հայրը նայեցավ աղջկան այլայլված դեմքին։

— Ի՞նչ է պատահեր քեզի։

Հրաչուհի չպատասխանեց։ Ձեռքը տարավ հագուստին դրպանը և շոշափեց նամակը։ Հետո մեքենաբար հանեց նամակը և դրավ առջևի սեղանին վրա...

— Հրայրե՞ն է։

— Ո՛չ, Զոհրաբեն, Հրայրի լավ ընկերեն, կհիշես, չէ՞... — դողդոջեց Հրաչուհի և խոնարհեց նայվածքը, պահելու համար կարմրած, արցունքոտ աչքերը ծերունիեն...

— Ի՞նչ նորություն կա եղեր այդ կողմերը,— հարցուց հայրը անտարբերությամբ, դուրս փչելով սիկարեթին ծուխը։

— Նորությո՞ւն,— թոթովեց Հրաչուհի և խածավ շրթունքը։— Այո, նորություն, քանի մը հատ նոր հայրենասերներու սպանությունը անո՞նց կողմե, բայց,— հուզումը կլլելով ավելցուց Հրաչուհի,— ժողովուրդը անհամբեր հայրենիք գալու կսպասե եղեր.

— Հրայրը այս տարի պիտի գա՞...

Հրաչուհիի դեմքին մկանները սկսան դողդողալ ջղաձգորեն։ Լայնաբիբ նայվածքը մնաց սևեռուն հորը

ճակտի խորունկ կնճիռներուն մէջ, շրթունքները քանի մը անգամ հեռացան իրարմէ, բայց ան մնաց լուռ ու հուզումէն ճզմեց դեղձան խոպոպիկները։

— Ի՞նչ պատասխաններ...

Որքա՜ն աղետներ էին անցեր անոր գլխէն։

Զարդ։ Տարագրութիւն։ Բանտ։

Հետո, մահը իր կնոջ, որուն համար բժիշկ մ'իսկ չկրցաւ բերել, փող չունենալով։

Մահը՝ տասնամյա տղուն՝ Պողոսի, աղքատութեան և անսնունդութեան հետևանքով։

Մնացեր էր միայն ինքը հորը համար։

Վախենալով օտար տիրոջ վրա մեռնելէ, հայրը շտապեր էր առաջին իսկ նավով հայրենիք վերադառնալ։

— Մեկ հատիկ մուրազ ունիմ,— ըսեր էր ան,— թշնամիին քանդած տանը փոխարէն, հայրենիքիս մէջ շինել նոր օջախս, ձեռքերուս արյունը չցամքած, փորել փոքրիկ պարտեզ մը և տնկել նոր ծառեր... Ուրիշ բան չեմ ուզեր կյանքէն։

Բախտահալած այդ մարդը, ունեցեր էր կյանքի երջանիկ, իր ցանկացած վերջալույսը։

Նոր Արաբկիրի բարձունքին հաղթահասակ կկանդներ նորակառույց իր տունը, առջևը փոքրիկ պարտեզով։ Բանվորներուն չափ ինքն ալ էր աշխատեր, քրտներ, հոգներ...

— Փեսաս կուգա, ձեզի հետ լավ քեֆ մը, լավ հարսանիք մը կընենք...

Ի՞նչ ըսեր հիմա հորը։

Ըսե՞ր իրականությունը։

Բայց ինչո՞ւ տխուր ամպ մը սահեր ծերունիին վերջալույսի պայծառ երկնքին վրայեն։

— Հրայրը,— սկսավ հանդարտ, բայց հուզումը նորեն լեցուց կոկորդը և ձայնը ընդհատվեցավ։

Լռեց երկար պահ մը, և հանկարծ, կարծես գտած ըլլար ըսելիքը.

— Անոր դալուն մասին ոչինչ չէ գրված,— հարեց։ Նայեցավ սեղանին վրայի նամակին։

Աճապարանքով գրպանը դրավ զայն։

Սենյակ, իր, առարկա, դիմացի բլուրը, լեռները, սահեցան, անհետացան աչքին առջևեն և երևակայության առջև մնաց միայն հեռավոր, լազվարթ այդ ծովը, որուն վրա, թեթևորեն դեպի ծովեզերք հակած, կհանգչեր հայրենադարձ նավը։ Քարափին վրայի բազմահազար ժողովրդին աչքերուն մեջ այնպիսի հուր կար ու այնպիսի կարոտ, որ կարծես ծովուն հեղուկ ըլլալը մոռացած, կուզեր առաջ նետվիլ, քալելով հասնիլ հայրենիք։

Հեռո՞ն, ցանկապատի մը վրա կանգնած, էլեկտրական սյունե մը ամուր բռնած, Հրայր տենդագինորեն կշարժեր թաշկինակը։ Այնքան ուրախ էր, ինչպե՞ս կժպտեր։

Նավը քալեց, ահեղագոչ հաղթերգ մը բարձրացավ հազարավոր կուրծքերե.

«Փառք քեզ, միշտ փառք, Սովետական Հայաստան»։

Նավը հեռացավ։ Ժողովուրդը շարունակեց անշարժ նայիլ նավուն ետևեն։

Հրայր հապճեպ քայլերով բարձրացավ խմբագրատուն։

«Նավ մը ևս դեպի հայրենիք».

Գրեց խմբագրականին խորագիրը։

Դուռը զարնվեցավ։

Սրիտասարդ մը ներս մտավ։ Անծանոթ մը։

— Պարոն Հրայրը դո՞ւք էք...

Քիչ վերջ, Հրայր, փորին վրա կռացած, ձեռքովը ճնշելով փորին վրա դանակով բացված վերքը, հեռախոսին վրայեն բժիշկին զանգ կոտար։

— Ալո՞, ալո՞...

Ձեռքերը թուլցան...

Ինկավ գետին։

— Ալո՞, ալո՞, ո՞վ է խոսողը, կշարունակեր պոռալ, բաց թողված հեռախոսին մեջեն բժիշկը։

* * *

Հրաշուհի ճիչ մը արձակեց։

— Ի՞նչ պատահեցավ, ի՞նչ կա,— ձայնեց հայրը, որ պատուհանին առջև նստած կծխեր։

Հրաշուհի սթափվեցավ։ Նայեցավ հորը սարսափահար, հետո դաշնամուրին վրայի Հրայրի նկարին, որ կժպտեր սիրալիր...

Ափին մեջ ճմռթկեց նամակը։

— Հայրի՞կ,— հեկեկաց,— այլևս մի՛ սպասեր, Հրայր պիտի չգա։ Ան սպաննված է...

Հայրը չխոսեցավ։ Թեթևորեն շարժեց գլուխը, և շարունակեց ծխել, արագ արագ, խորունկ քուլաներ ներս քաշելով։

Երկար պահ մը եղք միայն, երբ հետզհետե

կասատկանար Հրաչուհիի հեկեկանքը, հայրը մոտեցավ աղջկան, և ափը դնելով անոր ուսին.

— Աղջ՛իկս,— ըսավ,— դուն միակ աղջիկը չես, որ կորսնցուցած է իր սիրած տղան, հայրենիքին համար մղվող պայքարին մեջ։ Բազմաթիվ Հրայրի պես երիտասարդներ զոհվեցան հայրենական պատերազմի ընթացքին, հանուն երջանիկ հայրենիքի մը։ Հերոսներուն հիշատակը պետք է հարգել, անոնց սկսած գործը շարունակելով։ Ես շինեցի իմ նոր ու վերջին տունը հայրենի հողի վրա, որ հաղթական պիտի ժպտի դարերուն... Իսկ դո՛ւն, բոլոր ուժերովդ կաշխատիս հայրենիքիդ վերելքին համար... Մի՛ լար...

Հրաչուհի քանի մը րոպե կրցավ նվաճել հուզումը։ Հորը ուսերուն վրայեն նայեցավ դիմացը, դաշնամուրին վրա դրված Հրայրի նկարին։ Հրայր միշտ կը ժպտեր.

— Նավ մը ևս դեպի հայրենիք։

— Մենք հաղթեցինք...

Հոկտեմբեր, 1947
Երևան

ՅՏԵՍՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ...

Նավուն կամրջակին վրայեն. մեկնողները ուրախության և հույսի ճառագայթներ տեղացին՝ քարափը խնամած բազմության վրա, ու երբ նավը սկսավ շարժիլ, իրենց ձայնին ամբողջ ուժգնությամբ պոռացին.

— Յտեսություն՝ ի Հայաստան...

Ալպերթ քարափին վրա կեցավ երկա՛ր ատեն, մինչև որ անհայտացավ նավը ծովուն բացերը։ Հետո քալեց դանդաղ, երազո՛ւն, չպարսպված հուզումի մը ծանրությունը սրտին վրա։ Սրունքները այնքա՛ն դըժվար կշարժեին, կարծես թե ժամերով ճամփա էին քալեր։ Ներս մտավ հանդիպած առաջին անուշեղենի խանութեն։ Պաղպաղակ մը ապսպրեց։ Վառեց ծխամորճը և անկե բարձրացող ծուխին մեջեն դիտեց ժողովուրդը, որ պզտիկ խումբերով կհեռանար քարափեն։ Խոնավ ու անարև խցիկներու մեջ տժգունած փոքրիկներու դեմքին՝ մոգական լույս էր իջած։ Սրիտասարդները կքալեին ամուր ու հպարտ քայլերով, սիգարետի վերամբարձ ծուխին մեջեն՝ իրենց նայվածքը հառած պայծառ ապագայի մը տեսիլքին։ Մերունիները կըքալեին ավելի խոհուն, ավելի տրտում։ Կարծես յուրաքանչյուր քայլափոխին հանդիպեին աքսորի ճամփաներուն վրա նահատակված իրենց սիրելիներուն, որ այդ պահուն իրենց պես ողջերթի էին եկեր հայրենադարձ նավուն։

«Ցտեսությո՞ւն ի Հայաստան...»

Նավուն վրայի հոծ այդ բազմությունը հայերու,— իրենց անցյալին ողբերգությունը հայրենիքի երջանիկ ներկային մեջ թաղված տեսնող ծերունիներ, և հիվանդագին ներկայե մը դեպի առույգ ապագան դիմող պատանիներ ու մանուկներ,— ժամադրվեր էին քարափին վրա մնացողներուն հետ՝ հայրենիքին մեջ...

Ալպերթ զմելիին ծայրովը պարպեց ծխամորճին մեջի ծխախոտը, լեցուց նորը, քանի մը քուլա ծխեց ու նորեն դատարկեց։ Մտածումներուն պես անկազմակերպ ու ջղային էին ձեռքի շարժումները։

Այդ օր մեկներ էին բոլոր իր լավ ընկերները։ Հինգ օրեն անոնք կհասնեին Հայրենիք, իրենց կարոտի ու երազներու հանգրվանը։ Կտեսնեին Արարատը, Արագածը, Սևանը, Երևանի օպերան... Ինչպե՞ս կարելի էր, որ ինք անմասնակից մնար այդ բոլորին. Եվ ինչ որ մինչև քսանչորս տարեկանը հանդուրժելի էր թվացեր իրեն, հիմա արդեն անտանելի էր դարձեր։ Հայրենիքի կարոտը դահավիժող հորձանքով մը խուժեց երակներուն մեջ... ինչո՞ւ պիտի ընկերները, իրեն նման ուսանողներ ու բազմաթիվ այլ մարդեր, այսօր հասնեին Երևան անհասանելիին, իսկ ինք դեռ մնար օտար այդ քաղաքին մեջ։

Ինչու՞...

Ծխամորճը նետեց սեղանին վրա։

Հայրը ինչու՞ կարդիլեր իր հայրենիք երթալը։ Ինչու՞ ամեն անգամ, որ ներգաղթի համար արձանագրվելու խոսքը բանար տան մեջ, հայրը կթթվեցներ դեմքը ու շատ անտարբերությամբ կպատասխաներ։

— Այդ միտքը ուղեղիդ մեջ ո՞վ է մտցուցեր։ Դուն նայե, որ երաժշտանոցը հաջողությամբ ավարտես, և

Միսդր Բրաուն ինծի խոստացեր է քեզ ուղարկել Ամերիկա, կատարելագործվելու քու ասպարեզիդ մեջ։

Սպասյակը քանի մը անգամ մոտեցավ սեղանին ու հեռացավ, մինչև որ վերջին անգամ քիչ մը երկար կանգնելով դիմացը, քանի մը ծեքծեքուն խոնարհումներե վերջ, ափերը իրար շփելով ըսավ.

— Ուրիշ ոևէ բան չէ՞իք փափագեր առնել արդյոք։

Ալպերթ անդրադարձավ, որ պաղպաղակը հալեր էր առջևի ամանին մեջ։ Խանութը լեցվեր էր բազմաթիվ նոր հաճախորդներով։ Շատեր ոտքի էին մնացեր։ Երկար էր նստեր, պետք է երթար։ Այդ բանը կթելադրեր իրեն սպասյակին իր վրա հառած համառ նայվածքը։

Ոտքի ելավ, հավաքեց ծխամորճը, գլխարկը և ծոցատետրը սեղանին վրայեն, քանի մը կտոր թղթադրամ դրավ սպասյակին ափին մեջ և առանց սպասելու, որ ան փողին մնացորդը ետ տար, դուրս ելավ սրբճարանեն, ջղայնության ու աճապարանքին մեջ զարնվելով քանի մը շքեղ հագնված կիներու և օրիորդներու։

Քարափը պարպվեր էր։

Մովու ալիքները կգրոհեին, կփշրվեին խարակներուն վրա ու կնահանջեին... Մտածումները կաշխուժանային։ Առաջին հայրենադարձ նավը մեկներ էր այդ օր։ Ինք մնացեր էր այդտեղ։ Հա՞յրը... Մտքին մեջ ամեն բան կխառնվեր կրկին, տրամադրությունը կիյնար, կքայեր շտապ, առանց առջևը նայելու։

Այսպես վազելով հասավ հանրակառքի դիծը, և

առանց երկրորդին սպասելու, կախվեցավ արդեն սուրացող, բեռնավորված հանրակառքի մը դուրսի երկաթե ձողեն։

Քաղաքին կեդրոնը բարձրացած աշտարակի ժամացույցը ըսավ իրեն թե ուշացեր էր։ Հայրը պատվիրեր էր, որ շուտ տուն երթար այդ իրիկուն։ Երաժշտանոցի ջութակի իր դասախոսը՝ Միսդր Բրաուն ընթրիքի էր հրավիրված իրենց տանը։ Հորը և անոր հարաբերությունները սերտացեր էին վերջերս...

Ալպերթ ուսերը թոթվեց ջղայնությամբ և ափին մեջ բռնած դատարկ ծխամորճը տարավ բերանը։

Հանրակառքը անընդհատ կայարան կփոխեր, բայց կարծես ճամփան երկարեր էր, իրենց տունը շատ հեռու էր դեռ։ Միսդր Բրաուն կարող էր իր ուշացումեն վիրավորվիլ, երաժշտանոցին մեջ կարող էին իր գործերը խառնվիլ... Հայրը բարկութենեն ինքզինք կուտեր հիմա...

Խածավ ծխամորճին կոթը...

Հանրակառքեն ներս մտնելու համար մարդիկ զինք կհրեին, կհրմշտկեին։ Գեր կին մը հանրակառքեն իջնելու իր ճիգով, քրտինքներու մեջ էր մնացեր...

Հա՜յրը...

Ալպերթ ավելի ամուր բռնեց ձողը։

* * *

Երբ տուն հասավ, տնեցիներն ու հյուրը ընթրքի սեղանին շուրջն էին։ Խոժոռ ակնարկներ սևեռեցան Ալպերթի վրա։ Ամբողջ միջավայրը անախորժ տրամադրության մը տակ էր։ Հակառակ անմիջապես ա-

ռանձնանալու իր փափագին, ստիպված էր սեղանին շուրջ իրեն համար պարապ ձգված տեղը դրավել։

— Ալպերթ ուշացար, որտե՞ղ էիր, գիտեիր, որ ես ձեզի պետք է դայի այսօր,— լսվեցավ Միսդր Բրաունի բարակ, ճաթռտած ձայնը։ Ես եկեր եմ հատկապես քեզի համար։ Հայրդ իմ հին բարեկամն է։ Ան շատ լավ մարդ է։ Տասը տարիե իվեր մեր երաժշտանոցին քարտուղարն է, և մենք բոլորս գոհ ենք իրմե։ Ես կուզեմ, որ դուն հորդ պես մարդ դառնաս։ Երաժշտանոցը ավարտելեդ հետո, մենք քեզ կղրկենք Ամերիկա, կատարելագործվելու համար։ Բայց եթե այս ձևով շարունակես...

Ալպերթ կծու նայվածք մը նետեց հորը կողմը։ Հետո նույն նայվածքով նայեցավ սպիտակ հոնքերուն տակ փալփլող դասախոսին կանաչավուն աչքերուն...

— Հայրդ քեզմե գոհ չէ, այս շրջանին, Ալպերթ,— շարունակեց ամերիկացին, իր սովորական, միօրինակ գաղջ ձայնովը։— Ան ինծի ըսեր է, որ դուն առաջվան կանոնավորությամբ չես պարապիր ջութակի դասերուդ, հաճախ կբացակայիս տունեն, և ինչ որ ամենեն վատն է, սկսեր ես դուն ալ զբաղվիլ քաղաքականությամբ։

— Միսդր Բրաուն,— բարձրացավ Ալպերթի ձայնը, բայց անմիջապես լռեց մորը զգաստության կանչող բարի նայվածքին տակ, և շարունակեց կտրտել ամանի մեջի մսի կտորը։

— Դուն արդեն հասուն երիտասարդ ես,— ավելցուց Միսդր Բրաուն։— Քու տարիքիդ, մարդիկ անպայման կմտահոգվին իրենց ապագայով, իրենց ընելիքով։ Իսկ Ամերիկա երթալով ապագադ ապահովված կըլլա։ Ան-

շուշա ամեն բան քեզմէ կախված է, քու վարմունքդ։

Ալպերթ դադրեր էր ուտելէ, և արմունկները սեղանին վրա, անթարթ կնայեր հորը, որ կծկվեր, փոքրացեր էր Միսդր Բրաունի կողքին, և մերթ ընդ մերթ գլխու հաստատական շարժումներով հավանություն կուտար անոր խոսքերուն։

Այսպես, տասը տարիե իվեր, ամեն օր քիչ մը ավելի, հայրը զրկվեր էր իր իսկական գոյութենեն, և դարձեր էր Միսդր Բրաունի կամակատարը, անոր շուքը։ Ալպերթ արյան մեջ զդաց ըմբոստացումի ալիքներու կուտակվիլը։ Ուզեց բռնել հորը բազուկներեն, ցնցել, ինքնագիտակցության բերել զայն։

— Միսդր Բրաուն,—խոսեցավ ի վերջո, ինքնաբավ ու հնչուն ձայնով մը,— իմ ապագաս ապահովված է արդեն, դուք պետք չունիք մտահոգվելու այդ հարցով։ Իմ ապագաս հոն է, հեռո՜ւն, Երևանի օպերային մեջ... Այնտեղ ապագաս կժպտի ինծի, առանց հորս և իմ ինքնասիրությունը պահանջելու իբրև փոխարկագին, իբրև հատուցում...

Վերջացուց խոսքը, երբ դեռ կուզեր խոսիլ, և ծիծաղելով բիրտ, կծու ծիծաղով մը՝ որով կուզեր իր տարիներու դառնությունն ու մաղձը դուրս թափել։

Միսդր Բրաուն նույնպես փորձեց ծիծաղիլ իր սովորական բարակ, հեգնական ծիծաղով, բայց չկրցավ։ Հոնքերու մեջտեղի երկու կնճիռները ավելի խորացան։ Զգաց որ Ալպերթ իրեն ենթարկվող հլու, հնազանդը չէր այդ օր։ Անոր ձայնին, անոր շարժումներուն, անոր աչքերուն մեջ մանավանդ, կար խորունկ ներշնչումե մը բխող արու վճռականություն։

— Օր մը, Միսդր Բրաո՛ւն,— շարունակեց Ալ-

պերթ,— ես Երևանի կամ Մոսկվայի ռատիոկայանեն կնվագեմ ամբողջ աշխարհի համար։ Կնվագեմ իմ երջանկության երգերս։ Հուսամ, մինչ այդ, դուք մոռցած չեք ըլլար իմ անունը։

Միսդր Բրաուն ճաշի անձեռոցը ծունկերուն վրայեն հավաքեց ու դրավ սեղանին անկյունը։ Ճակտի կնճիռներուն մեջ ակոսվեր էր քրտինքը։

Հայրը զգաց, որ տղուն խոսակցությունը ամենևին հաճելի չէր Միսդր Բրաունի համար։ Զգաց, որ ան խիստ վիրավորված էր նույնիսկ, որովհետև տանտիկնոջ շնորհակալություն հայտնելե վերջ, արագորեն քալեց դեպի դուռ։

Այտերը ափերուն մեջ, Ալպերթ լարված, ջղային վիճակով մը հետևեցավ, թե ինչպես մայրը կաղաչեր, որ Միսդր Բրաուն չերթար, քիչ մը ևս նստեր, իսկ հայրը խեղճացած կանգնած էր դռան ետև զլխիկոր, անխոս, հանցագործի մը նման։

Հորն ու մորը փոքրացումը, Միսդր Բրաունի սիրտը շահելու համար անոնց ի գործ դրած քծնանքն ու կեղծիքը, այնքան խոր վիրավորեցին Ալպերթի ինքնասիրությունը, վրդովեցին, ամչցուցին զայն այնքա՜ն, որ ան փակեց աչքերը չտեսնելու համար այդ բոլորը։ Հիշեց իր մանկության օրերու այն փոքրիկ մուրացկանին, որ ամեն օր իրենց տան դուռը կբախեր հազարումեկ երգեր, անուշ խոսքեր ու օրհնություններ շրթունքին, կտոր մը հացի համար... հիշեց... ու ծանր, խավարածիր տխրություն մը կախվեցավ թարթիչներու ծայրեն։

— Ըրածիդ հավնեցա՞ր,— դողդոջեց հորը ձայնը,— հապա՞ որ վաղը զիս գործեն հանեն, հապա՞ որ

երաժշտանոցին մեջ այլևս քեզի հաշտ աչքով չնայ-
ին...

— Ավելի լավ, թող հանեն, հարեց Ալպերթ ա-
ռանց հորը նայելու։ Ինչու՞ կմտածես այդ մասին։
Կերթանք հայրենիք և հո՛ն, դուն կգտնես քու կորսըն-
ցուցած մարդկային ինքնասիրությունդ...

Հետո վառեց ծխամորճը և մոտեցավ պատուհա-
նին։

Հեռու՞ն ծովն էր, հանդարտ, մութ ծովը։ Այդ մը-
թության մեջեն իրրև լույսի ճառագայթ իրեն ժպտե-
ցավ Նավը, որ դեպի Հայրենիք կտաներ տառապանքե,
ստրկացումե աղատագրյալ, և ալ հույսին ժպտող մը-
նացորդները, դարավոր ժողովրդի մը։ Թաշկինակնե-
րու ծփացող ալիքներեն հաղթական ձայն մը բարձրա-
ցավ կրկին հոգիին մեջ.

— Ցտեսություն ի Հայաստան...

Ժպիտով պայծառացավ մռայլված նայվածքը։

Հայրենիքեն իրեն կժպտեր իր ապագան, մոր մը
քարի, բոլորանվեր և սիրված աղջկա մը հմայիչ ժպի-
տով...

Ա՞Ն ԷՐ...

Սառնաշունչ քամին կփչեր, քշելով, տանելով ծառերու թափած դեղին տերևները։

Ժիրայր, ջութակը ձեռքին, վերարկուին օձիքը վերդարձուցած, վազեց, և հազիվ կրցավ տրամվայ բարձրանալ։

Կողքի, ապակին ջարդված պատուհանեն, կծու քամին կհարվածեր զինք, բայց տեղափոխվելու հնարավորություն չկար։ Տրամվայը այնքա՜ն խռնված էր։

Հաջորդ կայարանի վրա, Ժիրայր առիթեն օգտվելով, նստարանին վրա դրավեց իջնողներեն մեկուն տեղը, ջութակը տեղավորեց ծունկերուն վրա, և մեկեն աչքերը հանդիպեցան իջնելու համար շտապող, կանաչ վերարկուով աղջկան։

— Զելա՜...

Աղջիկը ցատկեց վար։ Տրամվայը սուրաց։

— Ա՞ն էր, Զելա՞ն,— խորհրդածեց Ժիրայր։ Միթե՞ ան ալ արդեն հայրենիք վերադարձած է։ Երջանիկ դող մը սահեցավ կռնակն ի վար։

Թերևս ան չէր,—աշխատեցավ հանդարտեցնել վրդովմունքը,— մարդիկ այնքան նման են իրարու։ Բայց վերարկուին կանաչ, մտերիմ գու՞յնը... Չէ, ան էր, Զելան։

Ժիրայր չզգաց թե ինչպես տրանվայեն ցած իջավ և քամիին կուրծք տալով, արագ քայլերով հասավ հանրակացարան։

Սենյակի ընկերներեն միայն Հրանդն էր տանը։ Ժիրայր ամեն օրվա պես չհարցուց.

— Ո՞ւր է Վահագնը, Սուրիկը։

Ընդհակառակը գոհունակությամբ դիտեց դուրս երթալու պատրաստվող ընկերոջը։

— Շուտ թող երթա,— մտածեց։

Այնպես կուզեր առանձին մնալ, հանկարծորեն ալեկոծված իր զգացումներուն հետ։

Ինչքա՜ն լավ էր։ Զելան, իր անցյալի ընկերուհին, այժմ Երևան էր։ Ինչպե՜ս գտնել զայն։ Ո՞ւր կբնակեր ան...

Պատուհանին առջև կայնած, ձեռքերը տափատին դրպաններուն մեջ, դիտեց Երևանի վրա իջնող մութը։ Լույսերը կդողդղային քամիի ցուրտ շունչեն։ Սկսավ եղանակ մը սուլել, հետո մեկեն դարձավ կրունկին վրա, վերցուց աթոռին վրա թողած ջութակը, և ինքնամոռաց, վերայած, նվագեց Զելայի շատ սիրած ֆրանսերեն երգը.

«Մենակ եմ այս գիշեր,
Երազներուս հետ,
Առանց քու սիրույդ»։

Հետո ջութակն ու աղեղը դրավ սեղանին վրա, և դլուխը ափերուն հենած պառկեցավ։

* * *

Աշնան ամպամած երեկո մը, Ժիրայր երգեցիկ խմբի փորձեն կվերադառնար, երբ սկսավ Բեյրութի հանկարծական, տեղատարափ անձրևը։ Ժիրայր շտապեց դեպի մոտակա կինոյի շենքը, և առանց հետաքրքրվելու թե ֆիլմը ինչ էր, տոմս մը գնեց և մտավ դահլիճ։ Բա-

վական է, որ անձրևեն պաշտպանվեր և քիչ մը հանգըստանար... Այնքա՜ն հոգնած էր։ Շաբաթներե ի վեր, գրասենյակին աշխատանքի ժամերեն դուրս, զբաղված էր իր ղեկավարած երգեցիկ խմբի փորձերով, որ երկու օր ետք, նոյեմբերի 29-ի տոնակատարության առթիվ, ելույթ պիտի ունենար։ Բեյրութի հառաջդիմական հոսանքները շահագրգռված էին, որ Հայաստան Սովետական կարգերու հաստատման տարեդարձի օրվան համերգը անցներ հաջող, փառաշուք մանավանդ, որ անոր ձախողությանը համար, դաշնակցականները ձեռնարկեր էին խափանարարական աշխատանքի, երգեցիկ խմբի անդամներուն մեջ։

Ուրեմն Ժիրայրի վրա էին դրված բոլոր հույսերը։ Ան ոչ մեկ ճիդ չէր խնայած, բայց անընդհատ աշխատանքը, անքուն գիշերները, ջլատեր էին ուժերը...

Դեռ շուտ էր։ Դահլիճին մեջ շատ քիչ մարդիկ կային։ Ժիրայր ճակատը սեղմեց ափերուն մեջ։ Գլուխը սոսկալի կցավեր։ Դուրսի խոնավ ցուրտեն վերջ, այնքան հաճելի էր էլեկտրական դույնզդույն, մեղմ լուսերով ողողված դահլիճը, հոն տիրող ջերմությունը։ Անոր աչքերը ակամա փակվեցան հանգստացուցիչ թմբության մը մեջ։

— «Կոմիտաս Երգչախումբ»-ի համերգին համար տոմս ունի՞ս, Զելա— լսվեցավ կանացի վճիտ ձայն մը։

Ժիրայր, իր երգեցիկ խմբի անունը լսելով, սթափեցավ։ Ճիշտ նստարան մը առաջ, իր առջևը, նստեր էին երկու երիտասարդուհիներ։

— Դուն ունի՞ս, հարցուց Զելան։

— Չէ, բայց հորեղբորս տղուն միջոցով կրնամ ճարել։ Երգեցիկ խմբի անդամ է...

— Կըսեն թե խմբի ղեկավար պարոն Ժիրայր Գալֆայանը շատ գեղեցիկ երիտասարդ մըն է, ճի՞շտ է,— ոգևորված խոսեցավ Զելա...

Ժիրայր ժպտեցավ։ Երկու աղջիկներու խոսակցությունը հաճույք պատճառեց իրեն։ Մանավանդ վերջինին իր գեղեցկության մասին արտասանած խոսքերը շոյեցին փառասիրությունը։ Մոցատեատրեն երկու տոմս հանեց, և աղջիկներու ուսերու բացվացքեն առջև երկարելով.

— Եթե կփափագիք, ես կրնամ ձեզի տոմսեր որամադրել,—հարեց։

Երիտասարդուհիներուն գլուխները մեքենաբար ետև դարձան։ Զելայի ընկերուհին դժգոհ նայեցավ Ժիրայրին և անմիջապես գլուխը առջև թեքեց։ Իսկ Զելան իր նշաձև, խոշոր ու մեղրանուշ աչքերով ժպտեցավ. վերցուց տոմսերը, և առանց աչքերը երիտասարդեն հեռացնելու, քաղցր, ներդաշնակ ձայնով մը շշնջաց.

— Շնորհակալությո՛ւն, որքա՜ն ազնիվ էք... ժամանակ չտալով, որ Զելա նայվածքը առջև, բեմին հառեր, փորձելով խոսակցություն մը սկսիլ.

— Լավ ձայն ունի՞ք, հարցուց։

— Ինչո՞ւ։

— Թերևս ուզեիք իմ երգեցիկ խմբին հետ եիգել...

Ուրախության կայծ մը անցավ Զելային աչքերուն մեջեն։ Միթե՞ ան նույն ինքը Ժիրայր Գալֆայանը չէր։ Մշտեց ընկերուհիին թևը, բայց ան շարունակեց դիտել ֆիլմը, որ սկսվեր էր արդեն, դժգոհ Զելայի վարմունքեն։ Այդ ի՜նչ շուտ անծանոթ երիտասարդի մը հետ խոսակցություն էր սկսեր...

Շուտով Ժիրայր տեղափոխվեցավ Զելայի քովի աթոռին վրա։ Ամբողջ սեանսի ընթացքին ֆիլմին չնայեցան, և երբ վերջավորության դահլիճին մեջ բարձրացած աղմուկը ընդհատեց իրենց ջերմ զրույցը, երկուքն ալ դժգոհեցան և իրարու նայեցան նշանակալից նայվածքով մը, որուն մեջ ապագա հանդիպումներու խոստումը կար։

Անոնք շարունակեցին իրարու հանդիպիլ։ Սկիզբները Ժիրայր հանդիպման ժամին կսպասեր սրտատրոփ, և միշտ ժամանակեն առաջ ժամադրավայր կհասներ։ Զելայի ներկայությունը անհրաժեշտություն էր դարձեր իրեն համար, դրեթե ջուրակին չափ կենսական։ Արդեն երրորդ հանդիպումի ընթացքին, ան ուզեց Զելային բացատրել իր զգացումները, ապագայի խոստումներ տալ, բայց հետո, որոշումը համարեց կանխահաս։ Դեռ չէին ճանչնար իրար։ Թող քիչ մը ժամանակ անցներ...

Ժամանակը անցավ, բայց Ժիրայր կորսնցուց Զելայի հանդեպ ունեցած ջերմությունը։ Խոսակցության նյութը շուտով սպառեցավ իրենց միջև։ Զելա շատ սովորական աղջիկ մըն էր, բոլորովին անտեղյակ աշխարհի իրադարձություններեն, արվեստեն, գիտության նվաճումներեն։ Անոր հետաքրքրության աշխարհը այնքան սահմանափակ էր, շրջապատված ցուցափեղկերու զարդեղեններով և հոլիվուտյան արտիստներով, մանավանդ անոնցմով, որոնք սիրային դերեր լավ կկատարեին։

Չնայած որ իրենց հանդիպումները դարձան ավելի հազվադեպ, բայց չդադարեցան։ Ժիրայր շատ փորձեց, որ Զելան իր սալոնային հակումներեն հրաժարեր, վայրկյանը անգամ մը հայելիին չնայեր, և անընդհատ դուլպայի ետևի գիծը չուղղեր, կամ տրներ օդակաձև խո-

շոր կարմիր օղերը, որոնք բնավ չէին վայլեր իրեն, բայց չհաջողեցավ։ Այդպես էին անոր բոլոր օտար ու հայ ընկերուհիները։ Զելա չէր կրնար անոնցմե ետ մընալ։ Ուստի, պարահանդեսն ու շոկոլադը շարունակեցին մնալ անոր երկու շատ սիրելի նախասիրությունները։

Ժամանակ մը վերջ, Ժիրայր մեկնեցավ հայրենիք և ընդունվեցավ Երևանի կոնսերվատորիան։

Զելան դարձավ հեռավոր, քաղցր հուշ և երբեմն, առանձնության ժամերուն, թաքուն ցանկություն մը կրծկեց սիրտը.

— Ի՞նչ լավ կըլլար եթե Զելան հայրենիք գար...

Նույնիսկ մերթ ընդ մերթ այդ ցանկությունը վերածվեցավ անզուսպ կարոտի։ Կհաներ ծոցատետրեն Զելայի նկարը և կդիտեր զայն երկա՞ր, անհագուրդ...

Անոր նշաձև, մեղրանուշ աչքերը միշտ կժպտեին քաղցրորեն...

«Մենակ եմ այս գիշեր,
Երազներուս հետ,
Առանց քու սիրույդ»։

* * *

Երկու ամիս, գրեթե ամեն երեկո, Ժիրայր Աբովյան փողոցի վրա երթևեկեց Զելային հանդիպելու հույսով։ Հետո սկսավ ծիծաղիլ ինքն իր վրա, որ ժամանակը ի զուր կվատներ։ Թերևս Զելան հայրենիք չէր իսկ եկած, և հիմա հեռուն, Բեյրութի մշուշոտ ծովափի երկայնքին կշրջեր ուրիշ ընկերոջ մը հետ...

Ժիրայր հետզհետե մոռցավ տրամվայի անակնկալ հանդիպումին մասին։ Զելան նորեն դարձավ անցյալ, հիշատակ։ Խորասուզվեցավ կոնսերվատորիայի իր պարապմունքներուն մեջ։ Ամբողջ էությամբ տարվեցավ իրեն համար սիրելի ձայներու աշխարհով։

Բայց...

Գիշեր մը Ժիրայր իր սենեկակից ընկերոջը հետ օպերա գնաց։ Երբ ուշադիր կքններ աթոռներու շարքը, իր տոմսի համարով աթոռը գտնելու, նայվածքը սառեցավ երկրորդ շարքի վրա նստած աղջկա մը խարտյաշ մազերուն մեջ։

Շվոթված քայլերով մոտեցավ անոր։

— Զելա՞։

Աղջիկը ապշած նայեցավ իր մոտ կայնած երիտասարդին և ուրախ բացագանչեց.

— Ժիրայր, որքա՞ն կուզեի քեզի հանդիպիլ... վեց ամիսե ի վեր արդեն Երևանում եմ...

— Զելա, ես քեզի մինչև ձեր տունը կուղեկցիմ.— երկար լռութենե մը վերջ իվերջո խոսեցավ Ժիրայր։

— Ես բժշկական ինստիտուտի հանրակացարանում կապրիմ։ Ընկերուհիներով եկած եմ,—հարեց Զելա, ակնարկով ցույց տալով քովի նստողները։

Ռոպե մը անոնց նայվածքները մնացին շվարած։ Ժիրայր անպայման կուզեր խոսիլ Զելայի հետ։ Այս անգամ առիթը չփախցնել...

— Լավ, այսօր տուն կերթամ, Արաքիր, որոշեց վերջապես Զելա։

Յուրտ, աստղազարդ գիշերով անոնք լուռ քալեցին։ Ժիրայր այնքան ատենե ի վեր փափագեր էր հանդիպիլ

Զելային, մտածեր էր անոր մասին, կարոտեր զայն, իսկ հիմա ան քովն էր, իր կողքին, թևեն բռնած, և ինք չէր գիտեր ի՞նչ խոսեր։ Իրեն կթվեր թե ըսելիք ոչինչ ունի...

Զելայի մաղերեն բարձրացող անուշահոտությունը մեղմ քամին կցրվեր օդին մեջ։

— Որքա՜ն ցուրտ է,— Զելա ավելի մոտեցավ Ժիրայրին, այնպես որ իրենց ուսերը կպան իրարու։

— Ուրեմն բժկական ինստիտո՞ւտ կհաճախես,— զարմանալի է,— լռությունը խզեց Ժիրայր։

— Միթե՞։

— Չէի կարծեր, որ դուն կարող ես...

Ուզեց շարունակել, ըսել թե ինք չէր սպասեր, որ իր ճանչցած պճնազարդ, հոլիվուտյան ոսմանսնեռով տարված Զելան, կրնար երբևիցե ունէ լուրջ գործի ձեռնարկել։ Արդյո՞ք սա ալ անոր վաղանցուկ քմահաճույքներեն մեկը չէր...

— Ես. ձեր կարծիքին չդիմեցի ինձ համար ասպարեզ ընտրելու ատեն։ Իսկ գալով կարողությանս, թողեք, որ այդ մասին իմ դասախոսները դատեն։

Զելա կխոսեր խայթող կծու շեշտով մը և մատներուն մեջ կճմրթքեր մետաքսե թաշկինակը։

Ժիրայր ժպտեցավ։ Զելայի այդ խրոխտ, ինքնասեր խոսելաձևը, այնքա՜ն հաճելի նորություն էր իրեն համար։ Զգաց որ չէր կրնար, առաջվան պես ձեռ առնել Զելային...

— Այդ ի՞նչ շուտ կբռնկիս,— փորձեց կատակել,— ես պարզապես կուզեի ըսել, թե արդյո՞ք դուն կարող ես

տանիլ այդքան ցավ ու տխրություն... Գիտե՞ս, հիվանդներու աշխարհը տառապանքով լեցուն է...

— Երբազդաց արվեստագետներու ջիղերուն վրա, հիվանդներու աշխարհը կարող է վատ անդրադարձում ունենալ,— հեգնեց Զելա,—բայց դիս բոլորովին այլ բան կհետաքրքրե։ Կյանքը։ Ամեն մեկ հիվանդի մեջ նստած առողջ մասը։ Զորացնել այդ առողջը, հաղթահարելով հիվանդոտ մասին։ Ահա՛ թե ինչ...,— և կողմնակի ակնարկ մը նետեց Ժիրայրի վրա, որ ծխամորճը ատամներով սեղմած, լուռ կքալեր...

Զելա ինքնուրույն, ինքնավստահ՝ անհատականության կեցվածք էր ընդուներ։

Ժիրայր մեկեն ամուր սեղմեց աղջկան ձեռքը իր ափերուն մեջ։

— Զելա՛, դու որքա՜ն լավն ես... ինչքա՜ն ես փոխվեր, աճեր, հասունացեր դիտակցությամբ...

Զելայի նշաձև մեղրանուշ աչքերը եռանդագին կը բոցկլտային այնպիսի կենսունակ ժպիտով մը, որ հոգեցավ Ժիրայրի էության մեջ, համակեց զայն ամբողջովին։

— Ճիշտ է, փոխվեր եմ, չէ՞։ Իմ վատառողջ մասը թողեր եմ հեռուն, այդ ծովափնյա քաղաքին մեջ։ Իմ նախկին հակումները, արդյունքն էին այն միջավայրին... այնտեղ այնպիսին էի, որուն դուն գիտես, իսկ այստեղ, նոր միջավայրը, նոր մարդիկ հեղաշրջեցին իմ հոգին... ո՜, այնտեղ մարդիկ չէին զբաղվեր մարդուն գնահատումով, և մարդը կայլասերվեր։ Անոր ձգտումները կշեղվեին գեղեցիկեն ու ցանկալիեն դեպի վատը...

Զելա այնպե՜ս արագ կխոսեր, այնպես ոգեորված,

որ գիշերվա ցուրտ լռությունը կջերմանար անոր շունչով։

Ժիրայր անդրադարձավ, որ անթերի, նույնիսկ առտառոց արդուզարդով, ցուցափեղկի գեղեցիկ բայց անշունչ նախկին պուպրիկին տեղ, հիմա իր դեմ կանգնած էր իսկական, Զելան, գիտության կապված, աշխատող, ստեղծագործող, կյանքի գեղեցկություններով ապրելու տենչով վարակված աղջիկը...

— Ես կդառնամ վիրաբույժ,— ավելացուց Զելա հաղթական, և իր սովորական քաղցր ժպիտը նորեն թառթեց աչքերը։

— Ձծիծաղիս, արդեն սկսեր եմ դաշնամուրի դասեր առնել...

Փոքր քայլերով կբարձրանային դեպի Զելայի տունը տանող ամայի, զառիվեր ճամփով։ Ցրտաշունչ քամիեն պաշտպանվելու համար Ժիրայր դեպի առջև էր թեքեր գլխարկը։

Զելան իր ներկան ոգևորող ուժն էր, և ապագայի երջանկաբույր երազը։ Բայց արդյո՞ք աղջիկը կհամաձայնվեր...

Այս մտածումը առաջին անգամ ըլլալով վրդովեց Ժիրայրին, և խլեց իրմե խոսելու, առաջարկելու համարձակությունը։

— Զելա՜։

Աչքերը խոնարհեց, լռեց, կոշիկին ծայրովը սկսավ խփել ճամփուն վրայի փոքր քարերուն։ Ամիսն մեջ շոշափեց ծխամորճը և վարանոտ շարունակեց.

— Զելա, կհիշե՞ս մեր առաջին հանդիպումը կինոյի մեջ...

Կրկին լռեց։ Չգիտեր ինչպե՞ս բանաձևեր ըսելիքնե-

ը, որպեսզի արդյունքը ըլլար գեղեցիկ, տպավորիչ։

Մոտակա տունեն շան մը հաչոցը, սառնաշունչ քամին շափ անախորժ, երկարաձգվեցավ օդին մեջ։

— Զելա, քու բացակայությանդ ես հաճախ կնվագեի քու սիրած ֆրանսերեն երգը, կհիշե՞ս.

«Մենակ եմ այս գիշեր...»

Զելա մատը դրավ դռան զանգի կոճակին վրա։

Ժիրայր աչքերը բարձրացուց։ Անոնց մեջ կշարունակվեր երգին մնացած մասը.

«Մի թողուր ինձ առանց քու սիրույդ»...

Զելա ափերուն մեջ պահեց Ժիրայրի ձեռքը։

Հողաթափերը քաշքշելով ներսեն մեկը մոտեցավ դռան։

— Լավ, Ժիրայր, գնա՛,— ժպտեցավ աղջիկը խոստմնալից և վազեց ներս։

Ժիրայր վերարկուին օձիքը վեր դարձուց, և արագ քայլերով իջավ զառիվարը։

Ասվալտապատ փողոցին վրա թողած անոր ոտնաձայնը խառնվեցավ հետզհետե սաստկացող քամիի տարերքին։

Ժիրայր քալեց անտարբեր ցուրտին, Զելայի ժպիտով ջերմացած։ Նոր ձայներ, չերգված երգեր ծնունդ կառնեին անոր էության մեջ։

Երևանի լույսերը անուշ քթթյուններով կդիմավորեին զինք, կարծես կձայնակցեին գլխուն մեջ շրջան ընող երջանիկ ու հաղթական երգերուն...

1947
Երևան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ...

Երկու ծանր պայուսակներ ձեռքին՝ Սեդա շուկայեն կվերադառնար։ Միջօրեի շոգին ճնշումը կրկնապես կծանրացներ անոր բեռը։ Ան մերթ ընդ մերթ մայթին եզերքը կանգ կառներ հանգստանալու համար, հետո կշարունակեր ճամփան, դանդաղ ու հոգնած քայլերով։ Մեկեն անցորդ մը ետևեն մոտեցավ Սեդայի, և ձեռքը երկարելով պայուսակներեն մեկուն, շատ քաղաքավար կերպով բարևեց ու ռուսերեն բաներ մը ըսավ, զորս Սեդա չհասկցավ։

Սեդան հանկարծակիի եկած նայեցավ քովը կանգնած բարձրահասակ երիտասարդին և անոր ժպտախառն դեմքին և աչքերուն պայծառ կապույտին մեջ, գտավ այնպիսի ջերմ ու անկեղծ արտահայտություն մը, որ առաջին իսկ հայացքով վստահություն կներշնչե անծանոթին։ Զգաց, որ ան կուզեր օգնել իրեն։ Ուզեց խոսիլ, երիտասարդին բացատրել, թե արդեն մոտեցեր էր իրենց տանը և չէր ուզեր նեղություն պատճառել, բայց չկարենալով մտածումները ռուսերենով արտահայտել, շիկնոտ ժպիտ մը սահեցավ բարակ շրթունքներուն ծայրը։

— Շնորհակալություն,— շշնջաց ռուսերեն, և քիչ մը քալելե վերջ ավելցուց,— ռուսերեն չեմ գիտեր, հայրենադարձ հայ եմ։

Կարճ պահ մը լուռ քալեցին։ Հետո երիտասարդը սկսավ խոսիլ, իսկ Սեդա միջօրեի շողը և պայուսակին ծանրությունը մոռցած, ռուսերենի իր շատ նիհար բառապաշարը ջանալով վերհիշել, ուշադիր հետևեցավ անոր խոսակցության։

— Անունս Լև է, ըսավ երիտասարդը, Օրևաէ եկած եմ մեկ ամսով հանգստանալու։

Սեդա շատ դժվարով կրցավ հասկնալ այսքանը, մանավանդ որ Լևի ռուսական շեշտը բոլորովին նոր էր Սեդայի ականջներուն համար։

— Ես Բեյրութեն եմ,— ինքզինք ներկայացուց Սեդա, և շվարած կանգ առավ, ուրիշ ոչ մեկ տեղեկություն չկրնալով ավելացնել իր մասին։

— Բեյրութե՞ն... Անցյալ տարի՞ եք եկեր, ինչ լա՞վ է, ինչ լավ է։ Իսկ հիմա ինչպե՞ս կզգաք դուք ձեզ ձեր հարազատ հայրենիքին մեջ,— հարցուց Լևը խանդավառ և հետաքրքիր։

Պետք է ըսել, թե ան քանի մը անգամ ստիպվեցավ կրկնել իր խոսքը տարբեր բառերով, մինչև որ Սեդա ըմբռնեց, ավելի ճիշտը կռահեց ըսվածը։

— Շա՛տ լավ,— պատասխանեց Սեդա աշխույժ շեշտ մը ձայնին մեջ,— շա՛տ լավ,— ու նայեցավ Լևի աչքերու ջինջ կապույտին հուսահատորեն, որովհետև այդ «շատ լավ»-ով ան ոչինչ կրցավ բացատրել։ Իր զգացածը հայրենիքին մեջ շատ ավելի մեծ բան էր, շատ ավելի իմաստալից, քան այն պարզ, ամենեն սովորական առիթներով իսկ գործածված «շատ լավ»-ը։ Հայրենիքիս մեջ, մտածեց Սեդա, և Լևի ուղղված խորունկ ու համառ նայվածքով մը ուզեց փոխանցել այդ մտածումը անոր, հայրենիքիս մեջ ես զիս հեղինակա-

վոր զորությամբ մը համակված կզգամ։ Հոս կյանքմ ունի մեկնակետ ու նպատակ։ Ես հայրենի հողի վրա առաջին անգամ ըլլալով զգացի ներգործությունը այն օդակին, որ զիս կկամրջեր նախնիքներուս, ապագային ու հավերժին հետ։ Երբ կքալեմ այս փողոցներով, կզգամ թե հողը չի փախչիր ոտքերուս տակեն, գիտեմ թե ինձմե բարձրացող ամեն մեկ մտածում ու ձայն հարազատ արձագանքն է սա շենքերեն ու այգիներեն բարձրացող համերգին։

— Ի՞նչ լեզուներ գիտեք,— Լև ընդմիջեց Սեդայի մտային մենախոսությունը։

— Ֆրանսերեն, անգլիերեն,— սթափեցավ Սեդան, հետս թոթվեց ուսերը անտարբերությամբ և ալ չշարունակեց։

Ի՞նչ կարևորություն ունի թե ես գիտեմ խոսիլ մեկե ավելի լեզուներ, խորհրդածեց Սեդա։ Այս վայրկյանին, ինծի անհրաժեշտ է գիտնալ միայն ու միայն մեկ լեզու, ռուսերենը, որպեսզի ես կարենամ խոսիլ քեզի հետ, Լև, իմ առաջին ռուս բարեկամիս հետ։

Որքա՜ն տարօրինակ էր երևույթներու հակասությունը։ Սեդա տարիներով, իր պանդուխտ կյանքի ամբողջ ընթացքին, երազեր էր հանդիպիլ ռուս մարդուն, հայուն հին ու անկեղծ բարեկամին, անոր անխարդախ պաշտպանին։ Օտարության մեջ ամեն անդամ, որ ուրիշներ նախատինքով էին վերաբերվեր իրեն հանդեպ, դաժանորեն ոտնակոխեր՝ իր մեջի հայը, հայու ինքնասիրությունը, ամեն անգամ, որ դաղթահայու ճակատագիրը տխուր ու անհույս էր թվացեր իրեն, և Սեդա ինքզինք հանձներ էր թախծալի ու հու-

նալքված թափառումներու, իր երևակայության դաշտին մեջ երևցեր էր ռուս մարդը, իբրև անդորրացնող ու ոգեշնչող տեսիլք։ Ան հետևեր էր իրեն ինքնավստահ, հաստատուն քայլերով, և պայծառ ժպիտը դեմքին, զրուցեր հետը մտերմորեն, գգվելով, շոյելով իր հայու հալածված, բայց չընկրկող, դյուցազն հոգին։ Ան իր կապույտ նայվածքին ընդմեջեն Սեդայի աչքերը առաջնորդեր էր դեպի Երևան՝ հայ մշակույթի ու կյանքի վերածնված ոստանը։ Այո, հուսալքումի պահերուն իրեն հետևող այդ ռուս բարեկամը, դեպի ազգային արժեքներու գիտակցում էր առաջնորդեր զինք։ Ան Սեդային հուսադրեր էր, միշտ հուսադրեր, որ շուտով, դաղթահայուն տառապանքով բեռցված, օտար ծովերու փոթորկումին ու կործանումի վտանգին հանձնված նավը, այդ մահասարսուռ թոհ ու բոհին մեջեն կնավարկե հաղթականորեն դեպի հայրենի ափ։

Եվ այսպես, Սեդա օտարության մեջ, իր տրտում ու տառապակոծ կյանքին մեջ, ռուս մարդուն տեսիլք գոյության մտերմանալե վերջ, այսօր Երևանի իր երջանիկ կյանքի ընթացքին անակնկալորեն կհանդիպեր ռուս մարդուն, իր այնքան սիրած բարեկամին, և ոչինչ, ոչինչ կրնար խոսիլ հետը։ Հակառակ իր զղացումներու հարաճուն փոթորկումին, հակառակ իր նոր կյանքի մասին պատմելու անզուսպ փափագին, ան պոռթկումի ոչ մի ելք չէր գտներ, միայն կժպտեր գոհունակ, երախտագիտական ջերմ ու մտերիմ ժպիտով, և կրքալեր անոր կողքեն հաստատուն, ինքնավստահ քայլերով...

— Հասանք,— խոսեցավ Սեդա հայերեն, դռան մը առջև կանգ առնելով, և հպարտ շեշտ մը իր կանա-

ցի քնքուշ ձայնին մեջ,— սա մեր տունն է, Լև,— ըսավ,— մեր հայրենի տունը, մեր վերջին ու ապահով հանդրվանը։

Եվ հակառակ, որ Սեդա հայերեն էր խոսած, կարծես Լև հասկցավ ամեն մեկ բառը, կարծես նույնիսկ ան ներթափանցեց բառերու թաքուն մտերմության, և ժպտեցավ նորեն իր պայծառ ու անկեղծ ժպիտով։

Դռան առջև օրորվող ծառի շուքին տակ սպասեցին անոնք, մինչև որ Սեդայի մայրիկը դուռը բացավ։ Երկուքին ալ ճակատեն քրտինքի կայլակներ կհոսեին իրենց արևակեզ այտերն ի վար, երկուքն ալ նեղված էին տաքեն, բայց երկուքին ալ աչքերուն մեջ անփույթ ծիծաղ մը կցոլար, և իրենց շրթունքներեն երգի մը մրմունջը կբարձրանար...

Երբ դուռը բացվեցավ հյուրընկալ, գգվող զովություն մը խուժեց պատերեն, մտերմիկ շունչ մը բարձրացավ ամեն մեկ իրե ու կարասիե և ապահովության զգացումով պարուրեց Սեդայի սիրտը։

— Խնդրեմ, հրամեցեք,— հարեց ան կենսախինդ ձայնով մը։

Լև շառարկեց։ Երկուքն ալ պայուսակները դրին սեղանին վրա։

— Նստեցեք,— խնդրեց Սեդա,— խնդրեմ նստեցեք։

Հետո վազեց խոհանոց։

— Մայրիկ,— ձայնեց,— մեզ համար օշարակ կպատրաստես, համեղ, լավ օշարակ մը. ռուս բարեկամ է։

Սեդայի շարժումներուն մեջ այնքան աշխուժություն կար, այնքան սճապարանք։ Վազեց դեպի պա-

հարան։ Վերջուց օշարակի շիշը։ Կուզեր օգնել մորը։ Մեկեն՝ — Մամի,— ըսավ,— դինի ունինք, չէ՞։ Շիշ մը «Ոսկեվազ» պիտի ունենայինք տանը։

Փնտրեց շիշը։ Մեղմ ժպիտ մը խաղաց դեմքին վրա։

— Բացառիկ բան չէ, շշնջաց։ Լև միշտ ալ խմած է «Ոսկեվազ»։ «Ոսկեվազ» ունենալը արտասահման մեզ համար բացառիկ երևույթ էր։ Հիասթափված շուրջը նայեցավ։ Իրեն այնպես կթվեր, թե պետք է անպայման նոր, բացառիկ բանով մը պատվեր, Լևի՝ իր ռուս բարեկամին այցելությունը իրեն։

— Դուն գնա,— ըսավ մայրը,— դուն հյուրին մոտ գնա, ես կբերեմ։

Լև պատեն կախված նկար մը կդիտեր հափշտակված։ Երբ Սեդա Լևին մոտեցավ, ան աղջկան դառնալով ժպտեցավ մեղմ, երջանիկ, ռուս մարդու անմիջական ու պայծառ ժպիտով։

— Հայրենադարձ նավն է,— բացատրեց Սեդա մեքենաբար։— Սովետական «Պաբեդա» նավն է։

Լև գլխով ըրավ։ Ան արդեն կարդացած էր նկարի բովանդակությունը կայմին վրա կայնած խուտներամ մարդոց խնդալիր ժպիտներեն։

— Գիտե՞ս ինչ կնշանակե «Պաբեդա»,— հարցուց Լև։

Օհ, Սեդան վաղուց գիտեր այդ բառը։ Այդ իր սորված առաջին ռուսերեն բառն էր։ «Պաբեդա» հայրենադարձ նավն էր, հզոր ներկայի մը հաղթանակը՝ տխուր անցյալի մը վրա, Սովետական Միությունեն երկարած բարեկամական ղորավոր ձեռքն էր այդ, փրկության լաստը՝ գաղութահայության։ Ներդաղթի խոր-

հրդանիշն էր «Պարեզան», հայրենիքի հաղթանակը պաթլահայ հայրենադավ ուժերու դեմ։

— Սեդա,— կանչեց մայրը, ափսեն ու բաժակները սեղանին վրա դնելով,— Սեդա՜, օշարակը պատրաստ է։

— Կուզե՞ս քեզի ռուսերեն սովրեցնեմ,— հարցուց Լև, օշարակի բաժակը շրթունքին մոտեցնելով։— Ես մեկ ամիս Երևան պիտի մնամ։ Շատ ծանոթներ չունիմ այստեղ և երբեմն ձանձրացուցիչ է, նույնիսկ տխուր, առանց լավ բարեկամի։ Ես քեզի ռուսերեն կսորվեցնեմ, և ամիս մը ետք, երբ Կիև, իմ քաղաքը վերադառնամ, դուն կգրես ինծի ռուսերենով։

Սեդա բառարանի օգնությամբ կհասկնար Լևի ամբողջ խոսակցությունը։

— Դուն Կիևցի՞ ես,— ձայնեց Սեդա, ուրախությամբ և երջանկությամբ ակաղձուն նայվածքը քաղցրորեն հառած Լևի դեմքին,— ուրեմն դուն Կիևցի՞ ես։

Հիշեց Հայրենական Մեծ Պատերազմը, իր սարսափները, հուզումը և հետո լացը ռադիոյի առջև, երբ Կիևի անկումը հաղորդեցին։ Կինոժապավենի պես Սեդայի աչքին առջևեն անցան ուրիշ քաղաքներու և գյուղերու անուններ, անոնց անկումը, հետո վերագրավումը։ Կիևը...

Հետաքրքիր նայեցավ Լևին։

— Գիտե՞ս,— ըսավ,— երբ Կիևը ինկավ, կարծեցի թե մեր սիրտը, մեր Երևանը տեղեն պոկվեցավ, և երբ Կիևը վերագրավվեցավ ես այլևս վստահ գիտեի, թե հայրենիք, Երևան պիտի վերադառնամ։ Իսկ հիմա,— հարցուց,— իսկ հիմա, ինչպե՞ս է Կիևը։

Լև հասկցավ Սեդայի միայն վերջին նախադասությու-

նը։ Շատ պարզ, հասկնալի ռուսերենով մը դանդաղ խոսեցավ, ամեն մեկ բառը շեշտելով։

— Սեդա, մեզ մոտ ոչինչ ավերված չի մնար։ Մենք շատ արագ կկառուցենք։ Նայե՛ Երևանին...

Սեդա Լևի հետ պատուհանին առջև կանգնած դիտեց Երևանը, իր հայրենի հոյակերտ քաղաքը՝ ճերմակ ու վարդագույն մեծադիր շենքերով, մաքուր ու լայն պողոտաներով և դալար ու զով այգիներով։ Դիտեց, դիտեց անհագ աչքերով։

— Սա մեր քանհինգ տարվան Երևանն է,— դողդոջեց ձայնը։— Հրաշքներու դարը անցած է,— ավելցուց մեկմ,— բայց սա հրա՛շք է։— Հետո Լևին դառնալով,— գեղեցիկ է Երևանը, այնպես չէ՞, Լև,— հարցուց և չկրնալով համապատասխան ռուսերեն բառերը գտնել, ավելցուց մտովի, «Գեղեցիկ է, և՛ ջերմ, և՛ հյուրընկալ, Աբովյանի եզերքն ի վեր օրորվող դալար ծառերուն պես...»։

Երկու փոքրիկ սևաչվի մանուկներ կխաղային բակին մեջ ձեռք-ձեռքի, երկու անուշ մանուկություն։

Լև ժամացույցին նայեցավ։

— Սեդա, ես հիմա պետք է երթամ,— հարեց։— Ես անպայման նորեն կուգամ և քեզի ռուսերեն կսովրեցնեմ։ Մենք արդեն բարեկամներ ենք։

— Այո,— պատասխանեց Սեդան,— լավ ու հին բարեկամներ։ Դուն ինծի կպատմես Կիևի մասին։

Եվ երբ Լև կմեկներ, երախտագիտական անդուսպ զգացում մը դեպի Լևը՝ ռուս մեծ ժողովրդի զավակներեն մեկը, հորձանք առավ Սեդայի երակներուն մեջ, սեղմեց անոր սիրտը, և ան սեղմեց Լևի ձեռքը ամուր։

— Շնորհակալություն։

Եվ խոհանոցի դռան մեջ կայնող մորը բարի աչքերը արձագանքեցին «Շնորհակալություն», և ծաղկամանեն բույր մը բարբրացավ «Շնորհակալություն», և պատեն կախված հայրենադարձ նավեն բաղմաթիվ բերաններ կրկնեցին։

«Շնորհակալությո՜ւն»։

Երևան օգոստոս, 1947.

ՑԱՆԿ

Վերջին սիրերգը 3
Թառամող տաղանդներ 15
Ոտք մը բնավ կարևոր չէ 29
Ժամանակը կուգա 40
Անոթի էր 48
Ան թող գա 55
Մենք հաղթեցինք 64
Ցտեսություն ի Հայաստան 74
Ա՞ն էր 82
Շնորհակալություն 93

Պատ. խմբագիր՝ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ԴԱՓԵՍՅԱՆ

ՎՖ 02314 Պատվեր 29. տիրաժ 3000 Տպագ 6,5 մ հեղ 6 մ
Հանձնված է արտադրություն 17—3 1949 թ.
Ստորագրված է տպագրելու 16—6 1949 թ.:

Հայպետհրատարակչության
Դրքի Տան տպարան. Երևան. Տերյան 91. 1949 թ.

ԳԻՆԸ 3 Ռ.